Azg
Azg armenian daily

11 ԱՊՐԻԼ 2000 ԵՐԵՔՇԱԲԹԻ 65 (2033)

Հնարավոր է, որ Ալեխան Հարությունյանը ազատ արձակվի ապրիլի 15-ին

ԵՐԵՎԱՆ, 15 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ապրիլի 10-ին Երեւանի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանը մերժեց հոկտեմբերի 27-ի գործով նախաքննական մարմնի միջնորդությունը մեղադրյալ Ալեխան Հարությունյանի կալանքի ժամկետը երկարացնելու: Ինչպես հայտնի դարձավ «Նոյյան տապանին», ըստ դատարանի, մեղադրյալի կալանքի ժամկետը եւս երկու ամսով երկարացնելու համար նախաքննությունն իրականացնող զինդատախազության ներկայացրած փաստարկները բավարար չեն: Հիշեցնենք, որ ՀՀ նախագահի աշխատակազմի նախկին ղեկավար եւ Անվտանգության խորհրդի նախկին քարտուղար Ալեխան Հարությունյանին կալանքի տակ պահելու ժամկետը լրանում է ապրիլի 15-ին, ուստի եթե զինդատախազությունը որոշումը բողոքարկի վերաքննիչ դատարան եւ այն կրկին մերժվի, ապա մեղադրյալը պետք է ազատ արձակվի կալանքից:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Արդարադատությունն ու Հայաստանը ոչ մի կերպ իրար չեն գտնում

Աղմուկ հանած մի շարք դատական գործերի տեւական ձգձգումը, դեռեւս նախաքննության մեջ տվայտող հոկտեմբերի 27-ի սպանդի հետաքննությունը մի իրավիճակ են ստեղծել մեր երկրում, որ թվում է Հայաստանն ու արդարադատությունը բնավ չեն գտնելու իրար: Ծամծմված ճշմարտություն է, որ օրենսդիր ու գործադիր իշխանությունների կողքին եւ դրանցից անկախ՝ նորմալ երկրներում գործում է 3-րդ իշխանությունը՝ դատարանը, այսինքն արդարադատությունը: Ու թվում էր, որ մեր Սահմանադրությամբ հաստատագրված եւ հետագայում ստեղծված օրենսգրքերով ամրագրված արդարադատության համար, իր համապատասխան ատյաններով եւ ինստիտուտներով, գործելու ժամը հասել էր, եւ քաղաքացիներն ու հասարակությունը պաշտպանված են օրենքը կիրառող մարմիններով, օրենքի՝ իշխանությամբ: Սակայն, ավաղ, միայն թվում էր: Վերոհիշյալ բնույթի գործերը, դրանց ձգձգումն ապացուցում են, որ հակառակ բոլոր տեսակի խոստումներին եւ սպասումներին, արդարադատությունը խուսափում է մեզանից: Հասարակ քաղաքացին ամրանում է իր այն գիտակցության մեջ, որ Հայաստանում արդարություն չի եղել ու չի լինելու: Սովորական քաղաքացին հաստատվում է իր համոզման մեջ, որ ծերբակալվում ու պատժվում է միայն խեղճը, անպաշտպանը, անփող մարդը, մինչդեռ իրական հանցագործները դեգերում են ազատ եւ համարձակ՝ շարունակելով վայելել հարգանք ու պատիվ:

Նույն տպավորության տակ, ծեռը դեմի մայր հայրենիքը թափ են տալիս նաեւ սփյուռքահայերը, դեռեւս սփյուռքահայի չվերածված հարյուր հազարավոր մեր համաքաղաքացիները, որոնց հայ պահող ընդամենը երկու ազդակ է մնացել՝ ազգային հպարտությունը եւ վերադարձի հույսը: Արդարադատության հետ պահմտոցի խաղալով, մենք հիմնահատակ քանդում ենք այդ ազդակները:

Ինչ վերաբերում է միջազգային հանրությանը, որի համար Հայաստանը ոչ միայն աշխարհագրականորեն ու ժառանգաբար, այլեւ բովանդակությամբ դեռեւս մնում է «նախկին խորհրդային երկիր», վաղուց արդեն հեգնաբար է մոտենում դատավորի պատմուճանից այն կողմ չբարեփոխված մեր դատարանին ու դատական համակարգին:

Ահա այս ֆոնի վրա պետք է մոտենալ Վանո Սիրադեղյանի երկրորդ փախստյանը: Կարեւոր չէ՝ կհերվենք, թե՞ կհաստատվեն առօրյա խոսակցությունների գլխավոր հարցադրումները՝ «Վանոն Հայաստանում է թաքնվել», «չի թաքնվել՝ երեկ Պառլամենտում վեր էր ընկել», «ոչ, Փարիզում է արդեն», «նրան փախցրել են իշխանությունները», եւ այլն, խնդիրը մնում է նույնը՝ նա խույս է տվել արդարադատությունից, իսկ վերջինս էլ՝ նրանից: Այսինքն՝ թե հետաքնդվողը, եւ թե հետաքնդողը ողջ երկիրն են դրել ծիծաղելի, արգահատելի կացության մեջ, եւս առավել հաստատելով հասարակ մարդկանց վերը նշված համոզումը, արտահայտի կարծիքը մեր պետության մասին:

Անշուշտ, արդար չի լինի, որ Վ. Սիրադեղյանն առանձին պատասխանատվության առաջ կանգնի իր փառքի ժամանակաշրջանում եւ իր մեղսակցությամբ այս երկրում կատարված բոլոր խժդժությունների ու հանցանքների համար: Բայց եթե իրոք իրեն համարում է անկախ Հայաստանի կերտիչներից մեկը, սխրված է ի՛ր չափով ըմբռել դատության բաժակից, որպեսզի Հայաստանն իրապես հիմնված լինի արդարության վրա: Սակայն այս բոլորից հետո բնական ու տեղին է հարցը՝ իսկ արդարադատությունը կուզենա՞ բռնել նրան...

ԹԲԻԼԻՍԻ

Էդուարդ Շեւարդնաձեն վերընտրվեց Վրաստանի նախագահ

Ասլան Աբաշիձեն այլեւս չի երկյուղում Թբիլիսի ժամանելուց

ԹԱԹՈՒԼ ՀԱՄԲԱՐՅԱՆ
Թբիլիսի

Արդեն 11 տարի Թբիլիսիի իշխանությունները ծաղկեպսակ են դնում վրաց զոհված երիտասարդների հուշակոթողին: 1989 թ. ապրիլի 8-ը համարվում է արյունոտ կիրակի. այդ օրը տեղի ունեցավ խորհրդային զորքերի եւ թբիլիսցի խաղաղ ցուցարարների բախումը: «Զավթիչներ, հեռացեք Վրաստանից», «Վրաստանի անկախությունն ենք պահանջում», «Կեցցե՛ ազատ Վրաստանը» լոզունգներով խաղաղ ցուցարարները ճզմվեցին խորհրդային տանկերի տակ: Արդեն 11 տարի Թբիլիսիի իշխանությունները զոհվածների ընտանիքներին վստահեցնում են, թե «արյունալի իրադարձությունները մանրամասնորեն ուսումնասիրվում են», «մեղավորները կպատժվեն» եւ այլն, եւ այլն:

Ովքե՞ր են մեղավորները: Այս հարցին Թբիլիսիում անուղղակի պատասխան են տալիս՝ հիշեցնելով, որ այն ժամանակ Վրաստանի կենտկոմի առաջին քարտուղարը Զումբեր Պատիաշվիլին էր, իսկ Էդուարդ Շեւարդնաձեն ԽՍՀՄ արտգործնախարարը: Թե ո՞վ զորքերին հրաման տվեց կրակել ցուցարարների վրա, Թբիլիսիում հստակ պատասխան չեն տալիս:

Ինչեւէ, 2000 թ. ապրիլի 9-ին կրկին ամենամասսայականը երկու անուններ էին՝ Շեւարդնաձե եւ Պատիաշվիլի: Այս դեպքում, սակայն, վրացիները ոչ թե պետք է փնտրեին մեղավորին, այլ քվեաթերթերի վրա նշում անեին: Ճիշտ է, Վրաստանի նախագահական ընտրություններում թեկնածուների թիվը յոթն է՝ ճարտարապետ Ավթանդիլ Ջոգլիձե, մանկավարժ Վաժա Ժղենտի, բանաստեղծ Թենգիզ Ասանիձե, իրավաբան Քարթլու Ղարիբաշվիլի, Աջարիայի առաջնորդ Աբաշիձե, նախկին կոմունիստ Զումբեր Պատիաշվիլի, ներկա նախագահ Էդուարդ Շեւարդնաձե, սակայն վերջին երկուսի առավելությունը ակնհայտ է:

Տեղի վերլուծաբանները ենթադրում էին մեկ հարց. արդյոք կդահանջվի՞ երկրորդ փուլ, թե՞ Շեւարդնաձեն կհաղթի առաջին փուլում:

Տես էջ 4

Կալանավորվել է Ազգային ժողովի նախագահի դահակախմբի ղեկավար Արբակ Բաբայանը

ԵՐԵՎԱՆ, 10 ԱՊՐԻԼ, ՍՆՍՐՔ: Երեւանի Արաբկիր-Քանաքեռ-Զեյթուն համայնքի առաջին ատյանի դատարանն ապրիլի 8-ին բավարարել է դատախազության միջնորդությունը՝ Ազգային ժողովի նախագահի դահակախմբի պետ Արբակ Բաբայանի կալանավորման առնչությամբ: Այդ մասին հաղորդեց ԼՌՆԻՀ Վահան Մուրադյանը: Հիշեցնենք, որ ապրիլի 5-ի գիշերը Բաբայանն իր հաշվեհամարային գենից կրակել էր անհայտ մի տղամարդու վրա: Ստացված տեղեկությունների համաձայն, ողբերգությունը տեղի էր ունեցել Երեւանի Կիեւյան-Բաղրամյան փողոցների խաչմերուկում՝ վեճի ժամանակ: Նույն օրն իսկ Բաբայանը ծերբակալվել էր իրավապահ մարմինների կողմից: Ավելի ուշ դարձվել է սպանվածի ինքնությունը: Քննիչի խոսքերով, վերջինս 1965 թվականին ծնված Վանուշ Սիմոնյանն է: Մուրադյանը հերքել է լուրերը, թե սպանվածը կապված է եղել: Վերջինիս ազգականների խոսքերով, Վանուշ Սիմոնյանն աշխատել է անշարժգույքի ոլորտում: Սակայն այս տեղեկությունը դեռեւս ստուգված չէ, նշեց ԼՌՆԻՀը:

Վանո Սիրադեղյանը Այրումով չի անցել

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ, 10 ԱՊՐԻԼԻ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Մամուլով տարածված այն լուրը, թե ՀՀՇ վարչության նախագահ, Աժ պատգամավոր Վանո Սիրադեղյանը Այրումով արտասահման է մեկնել, չի համապատասխանում իրականությանը, հայտարարեց հիշյալ երկաթուղային կայարանի ոստիկանության բաժանմունքի պետ մայոր Տելեմակ Ալեխանյանը: Չկա նաեւ որեւէ փաստ, որը հաստատեր Վանո Սիրադեղյանի՝ Նոյեմբերյանում ապրող իր հարազատներին այցելելու մասին խոսակցությունները:

ԲԱՔՈՒ

Վաֆա Գուլուզադե. Ղարաբաղյան նոր պատերազմն անխուսափելի է

ԲԱՔՈՒ, 10 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Վերջերս ադրբեջանական «Զաման» թերթին տված հարցազրույցում նախագահի նախկին գլխավոր խորհրդական Վաֆա Գուլուզադեն համոզմունք է հայտնել, որ Վլադիմիր Պուտինի հաղթանակից հետո նախկին կայսերապաշտական միտումներն ավելի վառ կարտահայտվեն: Նա ասել է, որ այսօր պետք է նախապատրաստվել ղարաբաղյան նոր պատերազմի, որին այս անգամ պարտավոր է մասնակցել նաեւ Թուրքիան: Գուլուզադեն վստահ է, որ Չեչնիայի խնդիրը լուծելուց անմիջապես հետո Ռուսաստանը նոր պատերազմներ կհրահրի Վրաստանում եւ Ադրբեջանում, քանի որ դեմ է տարածաշրջանի խաղաղությանը: Իսկ Թուրքիան, եթե չի ցանկանում կորցնել իր ազդեցությունն ու շահերը, այս նոր պատերազմում չպետք է անտարբեր մնա, ինչպես առաջին պատերազմում էր: Նա նշում է, թե ղարաբաղյան պայմանագիրը պատրաստ էր ստորագրման, սակայն խանգարեցին Կարեն Դեմիրճյանի ու Վազգեն Սարգսյանի սպանությունները: Ընդ որում մահափորձից փրկված ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը եւս համաձայն էր այդ

պայմանագրին, սակայն առկա է խաղաղության կողմնակիցների ֆիզիկական ոչնչացման ծրագիր, եւ հաջորդ մահափորձը լինելու է ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի դեմ եւ իմանալով դա՝ Քոչարյանն այժմ խուսափում է պայմանագրի ստորագրումից: Գուլուզադեն վստահ է, որ հրեավոր սցենարների հեղինակը Մոսկվան է՝ նշելով, թե Հայաստանում տեղակայված ռուսական 4 հենակետերում ծառայում է 50 հազար ռուս զինվոր (իրական թիվն առնվազն մեծացված է 10 անգամ-խմբ.), ՌԴ ՊՆ-ն ԱԳՆ-ի դեր է ստանձնել, եւ Ռուսաստանն ուղղակիորեն միջամտում է Հայաստանի ներքին գործերին: Եվ Ռուսաստանը թույլ չի տա իրականացնել ադրբեջանական նավթի եւ թուրքմենական գազի արտահանման ծրագրերը: «Ազատություն» ռադիոկայանի հաղորդմամբ, ըստ Գուլուզադեի, պատերազմն անխուսափելի է, սակայն Հեյդար Ալիեւի որդի Ռուսաստանը չի հանդգնի դա անել:

Գուլուզադեի համոզմամբ, նոր պատերազմում Ադրբեջանի դեմ նախկինի պես կռվելու է ռուսական բանակը, քանի որ հայկականը շատ թույլ է, եւ Թուրքիան, որն ունի համապատասխան համաձայնագրեր Ադրբեջանի հետ, այս անգամ ակտիվ կլինի: Ըստ Գուլուզադեի, տարածաշրջանի խաղաղության համար ամենակարեւորն այն է, որ աղքատ Հայաստանը Ռուսաստանի ազդեցությունից դուրս բերելու նպատակով Թուրքիան պարտավոր է բացել Հայաստանի հետ իր սահմանը:

Սիմիտիսը կկազմի նոր կառավարություն

ԵՐԵՎԱՆ, 10 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հունաստանի նախագահ Կոստանտինոս Ստեֆանոպուլոսը երկրի սոցիալիստ վարչապետ Կոստաս Սիմիտիսին է հանձնել նոր կառավարություն կազմելու մանդատը, քանի որ ապրիլի 9-ի խորհրդարանական ընտրությունների արդյունքում Սիմիտիսի ղեկավարած պան-հելլենիստական սոցիալիստական «Պասոկ» կուսակցությունը 300 տեղանոց խորհրդարանում ստացել է բացարձակ մեծամասնություն:

Բաքվում ավարտվեց թուրքալեզու երկրների ժողովը

ԵՐԵՎԱՆ, 10 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ապրիլի 9-ին Բաքվում ավարտվել է թուրքալեզու երկրների գագաթաժողովը՝ Թուրքիայի, Ադրբեջանի, Ղազախստանի, Ուզբեկստանի, Ղրղզստանի եւ Թուրքմենստանի մասնակցությամբ, ընդ որում Ուզբեկստանի ու Թուրքմենստանի նախագահները ներկա չեն եղել: Ըստ BBC ռադիոկայանի թղթակցի, թեեւ հանդիպման նպատակը միավորումն էր, սակայն բացահայտվեցին տարաձայնություններ, թեեւ ընդունվեց հետագա կոոպերացիայի մասին ընդհանուր հռչակագիր, սակայն գրեթե ոչ մի կոնկրետ համաձայնագիր չկնքվեց, հատկապես դեպի արեւմտյան շուկաներ նավթի ու գազի արտահանման բնագավառում: Առկա տարաձայնությունները ուժի մեջ մնացին, մինչդեռ փման եզրեր գտնվեցին մշակութային բնագավառում:

ԱԶԳ

ՊՈՒԹԱԳԻԿ

ՀԲ-ն ավելի է բացում իր դռները, որպեսզի չկրկնվի Սիեթլի նախադեպը

Նախնական մոտեցումներում ու նաեւ, ՀԲ նախագահ Ջեյմս Վուլֆենսոնի օրերս հրապարակված զեկույցում շեշտվում է, որ աշխարհում տեղի ունեցող գլոբալիզացիոն երեւույթները պահանջում են գլոբալ գործողություններ: Ընդհանրապես ենթադրվում է, որ միջազգային հանրության կողմից առաջիկա քննարկումները, որոնցում մեկ անգամ եւս ուրվագծվում են միջազգային խոշորագույն ֆինանսական կառույցների՝ ՀԲ-ի եւ ՄԱՀ-ի մոտեցումները կոնկրետ խնդիրներին, կընդունվեն աղմուկով: Հիշեցնենք դրա նախադեպը, անցյալ տարվա նոյեմբերին Սիեթլում Առեւտրի համաշխարհային կազմակերպության տարեկան համաժողովը, որի ժամանակ տեղի ունեցան բողոքի ցույցեր՝ միջազգային ֆինանսատնտեսական կառույցների գաղափարախոսության փոփոխության պահանջներով, ընդհուպ ԱՄՆ պետքարտուղար Մադլեն Օլբրայթի առջեւ ճանապարհ փակելը: Սիեթլում տեղի ունեցածը քննարկվում է մինչ օրս՝ հասկացնելով այն բանից հետո, երբ ՄԱՀ նախկին նախագահ Միշել Կամդեսյուի դեմին, որպես բողոքի նշան, ԱՄՆ մի էկոլոգիական կազմակերպության ներկայացուցիչ նետեց տորթ: Հետեւաբար, ՀԲ-ն մի կողմից գլոբալային քննարկումներից առաջ պետք է, որ զգուշանա նման հավաքներից, մյուս կողմից, ինչպես եւ երեւում է վերջին շրջանում վարած գաղափարախոսությունից, ավելի է բացում իր դռները՝ ասելու, թե ինչ է ուզում ու ո՞րն է լինելու նրա ռազմավարությունը: Քանի որ այժմ միջազգային ասյաններում ամենաշատը խոսվում է գլոբալիզացիայի մասին թե՛ դաղափարական, եւ թե՛ տնտեսական գործընթացներում, աղքատությունն ու սոցիալական բեւեռացումը աշխարհի տարբեր տարածաշրջաններում հասել են կրիտիկական աստիճանի, համաշխարհային ֆինանսական ինստիտուտների խնդիրը պետք է լինի օգնել երկրներին, գտնել նոր դեղատոմսեր իրավիճակը ոչ թե ավելի կարգավորելու համար:

Աղքատության բարձր մակարդակը ավելի ու ավելի է անհանգստացնում

Ջ. Վուլֆենսոնի այս տարվա զեկույցը նախորդ տարիների համեմատ ներկայանում է շատ ավելի դրամատիկ գույներով: Հատուկ շեշտված է աղքատության խնդիրը. չնայած քանի տարի զարգացած արդյունաբերական երկրները ապրում են խաղաղ պայմաններում ու «ծաղկում են», գլոբալ աղքատության խնդիրը շատ ավելի է սրվում: Այսօր մոտ 1,2 մլրդ մարդ, աշխարհի բնակչության համարյա մեկ չորրորդը, ապրում է ծայրահեղ աղքատության մեջ: Կանխատեսվում է, որ այսպես շարունակվելու դեպքում առաջիկա երկու տասնամյակում այդ ցուցանիշը կաճի, քանի որ այդ ժամանակամիջոցում սպասվում է երկրագնդի բնակչության աճ եւս 2 մլրդով, հիմնականում աղքատ երկրների բնակչության աճի հաշվին: Ավելի շատ անհանգստացնում է աղքատների ու հարուստների միջեւ բեւեռացումը: Բրազիլիայում. օրինակ, բնակչության 20 տոկոս ամենաչքավոր խավին բաժին է ընկնում ՀՆԱ ընդամենը 2,5 տոկոսը, իսկ 20 տոկոս առավել հարուստներին՝ ՀՆԱ տուրք երկու երրորդը: Նման իրավիճակում են հայտնվել իրարից տարբեր այնպիսի երկրներ, ինչպիսիք են Կոլումբիան ու Նիգերիան, Հարավային Աֆրիկան ու Ռուսաստանը:

Ինչ վերաբերում է Հայաստանին, մեր կողմից ավելացնենք, որ ՀՀ վիճակագրական ծառայության ամսական զեկույցի համաձայն, ՀՀ 20 տոկոս ամենաշատ եւ 20 տոկոս ամենաքիչ ապահովված բնակչության եկամուտների տարբերությունը կազմում է մոտ 32 անգամ, իսկ այդ երկու խավի բնակչության հարաբերակցությունը՝ 6,6 անգամ: Միայն այս տվյալները, առանց ՀՆԱ համեմատ հաշվարկների, ցույց են տալիս, որ Հայաստանը Բրազիլիայից ու վերը նշված մյուս երկրներից ավելի լավ վիճակում չէ, եթե ոչ ավելի վատ:

Տնտեսական ինտեգրացիան էլ փրկություն չէ

Անդրադառնալով Ջ. Վուլֆենսոնի զեկույցի վերլուծությանը՝ ըստ այդմ. «Անհանգստացնող թվերի ետեւում կանգնած է գլոբալ տնտեսական ինտեգրացիան», ինչը կարող է առավել դաժան ծեւեր ընդունել: Չինաստանում, Մալայզիայում ու Թաիլանդում, օրինակ, որտեղ վերջին տասնամյակներում նկատվում են տնտեսական զարգացման ու ինտեգրացիայի կայուն տեմպեր, դրան հակառակ սոցիալական անհավասարությունը ավելի է խորացել: Այդ խնդիրները պետք է լուծել, բայց գլոբալիզացիայի միայն չհիմնավորված քննադատությունները ոչինչ տալ չեն կարող: ՀԲ նախագահը եղել է այնպիսի երկրներում, որոնք «մեկուսացված են» գլոբալիզացիայից, բայց այդ երկրներում էլ «ջուրը կեղտոտված է այնքան, որ հնարավոր չէ խմել, երեխաները սովահար են լինում եւ երեխայի ծննդի հենց փաստը մահացածության բարձր աստիճանի հիմնական պատճառներից մեկն է»: Զեկույցում խոսվում է նաեւ այլ խնդիրների մասին, եւ դրանց լուծման ճանապարհը ձեւակերպված է վերջին պարբերության մեջ. «Մեզ պետք է իսկապես լայն քննարկում, ոչ թե փակ հանդիպումներ, եւ որպեսզի այդ քննարկումները դառնան իրականություն, անհրաժեշտ է իմանալ ու լսել բոլորի կարծիքը՝ եւ նրանց, ովքեր դուրս էին եկել Սիեթլի փողոցներ, եւ նրանց, ովքեր պատրաստվում են հանդիպել Վաշինգտոնում»:

Աշխարհը Համաշխարհային բանկի գնահատականներով ներկայանում է դրամատիկ գույներով

Իսկ Հայաստանն ու նրա նման երկրները՝ կրկնակի

Այս ամիս տպասվում են Համաշխարհային բանկի ու Միջազգային արժութային հիմնադրամի «գարնանային քննարկումները» աշխարհում տեղի ունեցող գլոբալ երեւույթների ու դրանց գնահատականների վերաբերյալ: Աշխարհի առջեւ դրված այսօրվա գլոբալ խնդիրներն են աղքատությունն ու սոցիալական անհավասարությունը, եւ Վաշինգտոնում կայանալիք այդ հանդիպումների ժամանակ, որոնց կմասնակցեն աշխարհի տարբեր երկրների ներկայացուցիչներ, պետք է փորձեն գտնել ինչպես այդ խնդիրների հաղթահարման ուղիները, այնպես էլ ԴԱՎ-ի եւ այլ ինֆեկցիոն հիվանդությունների, ինֆորմացիոն տեխնոլոգիաների, միջազգային առեւտրի եւ այլն: Ամենամյա այս քննարկումներից առաջ տարածվում է ՀԲ նախագահի զեկույցը, դրանցից հետո հրատարակվում են ձեռնարկներ տարբեր տարածաշրջանների տնտեսական-սոցիալ իրավիճակի ու զարգացումների վերաբերյալ: Նախնական գնահատականներով դրանք այս տարի ներկայանում են շատ ավելի դրամատիկ գույներով ու հատկապես Հայաստանի նման ճգնաժամում հայտնված երկրների համար:

Սիեթլում Առեւտրի համաշխարհային կազմակերպության տարեկան համաժողովը, որի ժամանակ տեղի ունեցան բողոքի ցույցեր՝ միջազգային ֆինանսատնտեսական կառույցների գաղափարախոսության փոփոխության պահանջներով, ընդհուպ ԱՄՆ պետքարտուղար Մադլեն Օլբրայթի առջեւ ճանապարհ փակելը: Սիեթլում տեղի ունեցածը քննարկվում է մինչ օրս՝ հասկացնելով այն բանից հետո, երբ ՄԱՀ նախկին նախագահ Միշել Կամդեսյուի դեմին, որպես բողոքի նշան, ԱՄՆ մի էկոլոգիական կազմակերպության ներկայացուցիչ նետեց տորթ: Հետեւաբար, ՀԲ-ն մի կողմից գլոբալային քննարկումներից առաջ պետք է, որ զգուշանա նման հավաքներից, մյուս կողմից, ինչպես եւ երեւում է վերջին շրջանում վարած գաղափարախոսությունից, ավելի է բացում իր դռները՝ ասելու, թե ինչ է ուզում ու ո՞րն է լինելու նրա ռազմավարությունը: Քանի որ այժմ միջազգային ասյաններում ամենաշատը խոսվում է գլոբալիզացիայի մասին թե՛ գաղափարական, եւ թե՛ տնտեսական գործընթացներում, աղքատությունն ու սոցիալական բեւեռացումը աշխարհի տարբեր տարածաշրջաններում հասել են կրիտիկական աստիճանի, համաշխարհային ֆինանսական ինստիտուտների խնդիրը պետք է լինի օգնել երկրներին, գտնել նոր դեղատոմսեր իրավիճակը ոչ թե շատ կարգավորելու համար:

Աղքատության բարձր մակարդակը ավելի ու ավելի է անհանգստացնում

Ջ. Վուլֆենսոնի այս տարվա զեկույցը նախորդ տարիների համեմատ ներկայանում է շատ ավելի դրամատիկ գույներով: Հատուկ շեշտված է աղքատության խնդիրը. չնայած քանի տարի զարգացած արդյունաբերական երկրները ապրում են խաղաղ պայմաններում ու «ծաղկում են», գլոբալ աղքատության խնդիրը շատ ավելի է սրվում: Այսօր մոտ 1,2 մլրդ մարդ, աշխարհի բնակչության համարյա մեկ չորրորդը, ապրում է ծայրահեղ աղքատության մեջ: Կանխատեսվում է, որ այսպես շարունակվելու դեպքում առաջիկա երկու տասնամյակում այդ ցուցանիշը կաճի, քանի որ այդ ժամանակամիջոցում սպասվում է երկրագնդի բնակչության աճ եւս 2 մլրդով, հիմնականում աղքատ երկրների բնակչության աճի հաշվին: Ավելի շատ անհանգստացնում է աղքատների ու հարուստների միջեւ բեւեռացումը: Բրազիլիայում. օրինակ, բնակչության 20 տոկոս ամենաչքավոր խավին բաժին է ընկնում ՀՆԱ ընդամենը 2,5 տոկոսը, իսկ 20 տոկոս առավել հարուստներին՝ ՀՆԱ տուրք երկու երրորդը: Նման իրավիճակում են հայտնվել իրարից տարբեր այնպիսի երկրներ, ինչպիսիք են Կոլումբիան ու Նիգերիան, Հարավային Աֆրիկան ու Ռուսաստանը:

Ինչ վերաբերում է Հայաստանին, մեր կողմից ավելացնենք, որ ՀՀ վիճակագրական ծառայության ամսական զեկույցի համաձայն, ՀՀ 20 տոկոս ամենաշատ եւ 20 տոկոս ամենաքիչ ապահովված բնակչության եկամուտների տարբերությունը կազմում է մոտ 32 անգամ, իսկ այդ երկու խավի բնակչության հարաբերակցությունը՝ 6,6 անգամ: Միայն այս տվյալները, առանց ՀՆԱ համեմատ հաշվարկների, ցույց են տալիս, որ Հայաստանը Բրազիլիայից ու վերը նշված մյուս երկրներից ավելի լավ վիճակում չէ, եթե ոչ ավելի վատ:

Տնտեսական ինտեգրացիան էլ փրկություն չէ

Անդրադառնալով Ջ. Վուլֆենսոնի զեկույցի վերլուծությանը՝ ըստ այդմ. «Անհանգստացնող թվերի ետեւում կանգնած է գլոբալ տնտեսական ինտեգրացիան», ինչը կարող է առավել դաժան ծեւեր ընդունել: Չինաստանում, Մալայզիայում ու Թաիլանդում, օրինակ, որտեղ վերջին տասնամյակներում նկատվում են տնտեսական զարգացման ու ինտեգրացիայի կայուն տեմպեր, դրան հակառակ սոցիալական անհավասարությունը ավելի է խորացել: Այդ խնդիրները պետք է լուծել, բայց գլոբալիզացիայի միայն չհիմնավորված քննադատությունները ոչինչ տալ չեն կարող: ՀԲ նախագահը եղել է այնպիսի երկրներում, որոնք «մեկուսացված են» գլոբալիզացիայից, բայց այդ երկրներում էլ «ջուրը կեղտոտված է այնքան, որ հնարավոր չէ խմել, երեխաները սովահար են լինում եւ երեխայի ծննդի հենց փաստը մահացածության բարձր աստիճանի հիմնական պատճառներից մեկն է»: Զեկույցում խոսվում է նաեւ այլ խնդիրների մասին, եւ դրանց լուծման ճանապարհը ձեւակերպված է վերջին պարբերության մեջ. «Մեզ պետք է իսկապես լայն քննարկում, ոչ թե փակ հանդիպումներ, եւ որպեսզի այդ քննարկումները դառնան իրականություն, անհրաժեշտ է իմանալ ու լսել բոլորի կարծիքը՝ եւ նրանց, ովքեր դուրս էին եկել Սիեթլի փողոցներ, եւ նրանց, ովքեր պատրաստվում են հանդիպել Վաշինգտոնում»:

«Ազգի» տրամադրության տակ կա նաեւ ՀԲ ամենամյա զեկուցումը՝ զարգացող ու անցումային տնտեսությամբ երկրների տնտեսության ֆինանսավորման հեռանկարների մասին, որի հիմնական գնահատականը՝ «երրորդ աշխարհի» երկրների իրավիճակի մասին հետեւյալն է. «Հետճգնաժամային շրջանում զարգացող երկրների տնտեսական աճը մեծացել է, սակայն բնակչության աղքատության որոշելը դեռեւս գերակայում է»: Թերեւս հենց այդ տեսանկյունից Հայաստանը, որպես սոցիալ-տնտեսական ճգնաժամի մեջ հայտնված երկիր, պետք է ավելի լուրջ մոտենա նման խնդիրներին ու իր քայլերը հնարավորինս մոտեցնի ընդհանուր բանաձեւերին: Մասնավորապես վերջին մեկ տարվա քննարկումները գլոբալիզացիայի շուրջ ապացուցում են, որ Հայաստանում վաղուց ի վեր կարիք կա կառավարության ծրագրային գաղափարախոսության: Օրեցօր սրվող սոցիալական վիճակը Հայաստանում պետք է համարվի երկրի ամենալուրջ խնդիրը: Բնականաբար, այդ խնդիրը չի կարող լուծվել այն օգնություններով ու ծրագրերով, որոնք իրականացվում են Հայաստանում: Դրանք կարող են ընդամենը կազմել կառավարության ծրագրային գաղափարախոսության մի մասը, այն գաղափարախոսության, որը չի եղել ու չկա մինչ օրս: ՀԲ-ն, օրինակ, Հայաստանի ամենամեծ տնտեսական գործընկերն ու ֆինանսավորողն է, սակայն նրա կողմից ֆինանսավորվող ծրագրերը ընդգրկում են միայն մի քանի ոլորտներ եւ չեն ներգրավում ողջ տնտեսական դաշտը:

ԳԱՅԱՆԵ ՄՈՒՐԱՏՅԱՆ

Բենզինի եւ հանքային ջրերի նոր ստանդարտներ

ԵՐԵՎԱՆ, 10 ԱՊՐԻԼ ՍՊՅՈՒՆ ՏՊՅՈՒՆ: Հունիսի 1-ից կսկսի գործել բենզինի նոր ստանդարտ: «Վառելիքի ներքին այրման շարժիչների համար: Ոչ էթիլացված բենզին: Տեխնիկական պահանջներ եւ փոխադրման մեթոդներ» անվանված ստանդարտը մշակվել է «կապար պարունակող բենզինի օգտագործումը կարգավորելու մասին» ՀՀ կառավարության 1999 թ.-ի դեկտեմբերի 31-ի որոշման համաձայն: Նոր ազգային ստանդարտը ներդաշնակեցված է EN 228, 995 ստանդարտի հետ: Այսուհետեւ ոչ էթիլացված բենզինի համար Հայաստանում կլինեն 4 մակնիշներ. Նորմալ-80, Սուպերային-91, Պրեմիում-95, Սուպեր-98: Ըստ հայթեստանդարտի տեղեկատվության, քանի որ Հայաստանը միայն վառելիք ներմուծող երկիր է, ներկվող վառելիքի բնապահպանական ցուցանիշների նկատմամբ կարող է ունենալ ավելի բարձր պահանջներ, մասնավորապես ոչ էթիլացված բենզինում կապարի պարունակության առումով: Բնապահպանական պահանջներից ելնելով ուշադրություն է դարձվելու նաեւ ներկվող բենզինում առկա ծծմբի, բենզոլի եւ խեժի թույլատրելի քանակներին:

Նկատի ունենալով հանրապետության կլիմայական պայմանները եւ այդ պայմաններում վառելիքի գոլորշիացման աստիճանները, շահագործման փուլերը բաժանված են 4 դասի: Այս ստանդարտով կիրառելի են ինչպես միջոցեսական ստանդարտում նշված փորձարկման մեթոդները, այնպես էլ եվրոպական ստանդարտով առաջարկվողները:

Մինչեւ այս ստանդարտի ներդրումը պատրաստ կլինի նաեւ վառելիքի ներկրման, տեղափոխման, շահագործման, պահպանման եւ վաճառքի խնդիրների տեխնիկական կանոնակարգը:

Բացի դրանից, նոր ստանդարտի մակնիշման համաձայն ավելի ճշգրիտ են ներկայացվում բենզինի որակական հատկանիշները, իսկ ստանդարտի մշակմանը մասնակցել են բոլոր շահագրգիռ կազմակերպությունները:

Հուլիսի 1-ից գործողության մեջ կդրվի «Ջրեր հանքային, խմելու, սեղանի, բուժիչ, շշալցված» նոր ազգային ստանդարտ: Ըստ ՀՀ կառավարությանն առընթեր ստանդարտացման, չափագիտության եւ սերտիֆիկացման վարչության տվյալների, մինչ այժմ հանրապետությունում գործում է միջոցեսական ստանդարտը, սակայն 1988 թ.-ի երկրաշարժից հետո զգալիորեն փոփոխվել է Հայաստանի հանքային ջրերի քիմիական բաղադրությունը, որը չի համապատասխանում գործող ստանդարտների պահանջներին: Նոր ազգային ստանդարտով սահմանվում է հանքային ջրերի քիմիական բաղադրությունը՝ հանքայնացում, հիմնական իոնները, բնորոշիչ բաղադրամասերը: Դրանք տրվում են ըստ հորատանցքերի:

Մշակված տեխնիկական պահանջներով շշալցումը պետք է կատարվի ըստ տեխնոլոգիական հրահանգում եւ սանիտարական կանոններում եղած ցուցումների, փաթեթավորումը համապատասխան տարաներով՝ ապահովելով հերմետիկությունը, ինչպես նաեւ փոխադրման ժամանակ արտադրանքի պատշաճությունը: Նոր ստանդարտի պահանջներից է նաեւ մակնիշումը, այսինքն պիտակի վրա ջրի անվանումից բացի պետք է լինի նաեւ ջրի խումբը, հանքայնացումը, հորատանցքի համարը, գտնվելու վայրը, արտադրողի մասին տվյալներ, ծավալը, ջրի պահպանման պայմանները, պիտանելիության ժամկետը եւ ստանդարտի նշագիրը:

ՀԱՍՏԱՌՈՏ

Հունիսի 18-ին ԼՂՀ խորհրդարանական ընտրություններ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 10 ԱՊՐԻԼ, ՍՆՍՐՔ: Սույն թվականի հունիսի 18-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում խորհրդարանական ընտրություններ տեղի կունենան: Այսպիսի որոշում է կայացրել ԼՂՀ խորհրդարանը: Ընտրությունները կանցկացվեն մեծամասնական համակարգով 33 ընտրատարածքներում, որոնցից յուրաքանչյուրում մեկ պատգամավոր կընտրվի: Պատգամավորական պաշտոնի թեկնածուները կառաջադրվեն ինչպես քաղաքացիական նախաձեռնությամբ, այնպես էլ հասարակական-քաղաքական կազմակերպությունների կողմից: ԼՂՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արդեն սկսել է քաղաքային, շրջանային եւ տեղամասային ընտրական հանձնաժողովների նյութական-տեխնիկական ապահովմանն առնչվող հարցերի լուծումը:

Արցախի թեմը եւ ԼՂՀ կառավարությունը կստորագրեն համաձայնագիր

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 10 ԱՊՐԻԼ, ՍՆՍՐՔ: Հայ առաքելական եկեղեցու Արցախյան թեմը ԼՂՀ կառավարության հետ ստորագրման է նախապատրաստում մի փաստաթուղթ, որն իրավական հիմունքով կարգավորում է եկեղեցու եւ պետության միջեւ ծագած խնդիրները: Այդ փաստաթուղթը նույնական կլինի սույն թվականի մարտի 17-ին Հայ առաքելական եկեղեցու եւ Հայաստանի կառավարության միջեւ կնքված համաձայնագրին: Այդ մասին հաղորդել է Հայ առաքելական եկեղեցու Արցախյան թեմի առաջնորդ Պարգեւ արք. Մարտիրոսյանը: Վերջինս նշել է, որ այդ համաձայնագրի շրջանակներում կորոշվեն եկեղեցու իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաեւ պետության պարտավորությունները եկեղեցու նկատմամբ եւ հակառակը: Նախկինում ԼՂՀ Ազգային ժողովն օրենք էր ընդունել, որի համաձայն հանրապետության տարածքում գտնվող բոլոր հոգեւոր արժեքներն ու սրբություններն անհատույց փոխանցվում են եկեղեցուն:

Հայաստանում քվեարկել են Շեւարդնաձեի օգտին

ԵՐԵՎԱՆ, 10 ԱՊՐԻԼ, ՍՆՍՐՔ: Մշտապես Հայաստանում բնակվող Վրաստանի քաղաքացիների մեծամասնությունն ապրիլի 9-ին Վրաստանի նախագահի ընտրությունների ժամանակ քվեարկել է երկրի գործող նախագահ Էդուարդ Շեւարդնաձեի օգտին: Այդ մասին ապրիլի 10-ին հաղորդեցին Հայաստանում Վրաստանի դեսպանության մամլո ծառայությունից: Ստացված տեղեկության համաձայն Հայաստանում բնակվող եւ քվեարկության իրավունք ունեցող Վրաստանի 206 քաղաքացիներից 179-ն (98 տոկոսը) իրենց ձայնը տվել են Շեւարդնաձեին, 22-ը՝ Զումբեր Փաչիաշվիլուն, իսկ 5 քվեաթերթիկներ անվավեր են ճանաչվել:

ԱՐՁԱԳԱՆՔ

«Թափովը» դարձավ «սուպերթափո՞վ»

«Նեոբոլշեւիզմից՝ նեոլիբերալիզմ» հոդվածում, տպագրված «Ազգի» ապրիլի 7-ի համարում, «սկսած» ոլորտների ու արտադրությունների շարքում հիշատակվել էր նաեւ Երեւանի «Լույս» արտադրական միավորումը, որի հիմնական տեսականին էլեկտրա ու լյումենեսցենտային լամպերը, կարծես թե ուներ սպառման շուկա: Արտահանման հարցն էլ սարսափելի բարդություններ հետ կապված չէր՝ արտադրանքը գոնե Անդրկովկասում մենաշնորհային էր:

Անցյալը բնորոշող «էր» օժանդակ բառը հատկանշական է՝ սովետական եւ անգամ հետսովետական շրջանի ծավալներից միայն տխուր հիշողություն է մնացել:

Սեւ մրրիկը պատեց «Լույս» էլեկտրատեխնիկական միավորմանը՝ Վիտյա Սականյանին (կենցաղում՝ «թափով Վիտյա») գլխավոր տնօրեն նշանակելուն պես: Պրն Սականյանը մի այնպիսի «գործունեություն» ծավալեց, որ անգամ նրան նշանակող ու հովանավորող ՀՀԾ-ի վերնախավն արածից փոշմանեց: Մեկ տարի առաջ ֆրեական գործ էր անգամ հարուցվել, բայց պրն Սականյանը կարծես թե մեղքերի թողությամբ չտառապեց: Հետեւանքը՝ ըստ մեզ հասած տեղեկությունների, Երեւանի Թումանյան փողոցում, առողջապահության նախարարության մոտակայքում, բացվել է մի նոր ռեստորան, որը, ըստ լուրերի, Սականյան ընտանիքի սեփականությունն է:

Եթե լուրերը ստույգ են, ապա դրանով իսկ մեկ անգամ եւս ապացուցվում է ֆիզիկայի հիմնական դրույթներից մեկի իսկությունը՝ նյութը (տվյալ դեպքում նյութական միջոցը) չի չքվում, այլ մի վիճակից փոխվում է մյուսի:

ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 8 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562863, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրէն
ՀՐԱՅՐ ԶՕՐԵԱՆ / հեռ. 529353
Համակարգչային ծառայութիւն / 562941
Apple Macintosh
համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

հրատապ

Էներգետիկ բաշխիչ ցանցերը սեփականաշնորհելու բանաձեւը գտնված է

Կոմպլեմենտար խաղախականությունը տնտեսության մեջ՝ եւ Ռուսաստանին եւ ԱՄՆ-ին

Կոմպլեմենտար խաղախականությունը մեր արտաքին ուղեգծի հիմքերի հիմքն է, խնդիր հավաստել է արտգործնախարար Վարդան Օսկանյանը: Սակայն տնտեսական մեր վերջին զարգացումները վկայում են, որ այս խաղախականության կիրառումը միանգամայն արդարացված է նաեւ սեփականաշնորհման ոլորտում: Հայաստանյան էներգետիկ չորս բաշխիչ ցանցերի սեփականաշնորհումը արդեն տեւական ժամանակ է, ինչ տարտվ բյուջեին մոտենում է 5 մլրդ դրամի:

Ռազմավարական գնորդը տարավորվում է անհրաժեշտ ներդրումներն իրականացնել սեփական միջոցներով, այսինքն՝ վարկեր ներգրավել, եւ այդ վարկերի տոկոսները վճարել: Այս նպատակադրմամբ է, որ կառավարությունը որոշել է սեփականաշնորհումն իրականացնել հետեւյալ սկզբունքով. բաժնետոմսերի 51 տոկոսից ոչ պակաս կվաճառվի ռազմավարական գնորդին, մինչեւ

Էներգետիկ անվտանգությունն ազգային անվտանգության հիմքերից է

Բաշխիչ ցանցերի սեփականաշնորհումը Հայաստանում լուծելու է երեք խնդիր՝ տնտեսական, սոցիալական եւ քաղաքական: Սոցիալականը սերտորեն կապված է տնտեսականի հետ, սակայն ներկա պահին հավասարաչափ, եթե ոչ ավելի կարեւորվում է քաղաքականը: ԱՄՆ-ը՝ ի դեմս AES Silk Road ընկերության, որը Ղազախստանում էներգաարտադրող մի շարք ձեռնարկություններ, ինչպես նաեւ Վրաստանում Թբիլիսիի «Թելասի» ցանցի սեփականատերն է, ցանկանում է ամրակայվել Հայաստանում, որպեսզի հակակշռի ռուսական գործոնը, իսկ ռուսական գործոնը մեր տնտեսության մեջ՝ ի մասնավորի էներգետիկայում, ազդեցիկ է: Հայաստանի գազային համակարգի 45 տոկոսը «Ռուսգազարդի» սեփականությունն է, 10 տոկոսը՝ «Իտեռայի»: Մեր ատոմակայանը գործում է Ռուսաստանից ստացվող միջուկային վառելիքի եւ ՀԱԷԿ-ի սպասարկմանը տրվող վարկերի հաշվին: Ռուսաստանը մտադիր չէ նահանջել բաշխիչ ցանցերի հարցում, եւ «Իտեռա» կազմակերպությունը «Ռոսէներգոատոմի» հետ մեկտեղ մինչեւ վերջ պայքարում է մեր բաշխիչ ցանցերի սեփականաշնորհման մրցույթում հաղթելու համար: Եվ ամերիկյան դեսպան Մայքլ Լեմոնը, եւ ՌԴ դեսպան Անատոլի Դյուկովը պարբերաբար այցելում են նախագահ Ռոբերտ Քոչարյանին, վարչապետ Արամ Սարգսյանին եւ ԱԺ խոսնակ Արմեն Խաչատրյանին՝ հիմնավորելով իրենց առաջարկների ռազմավարական կարեւորությունը: Դիվանագիտությունը ենթադրում է լարախաղացի ճկունություն, որ քայլում է օդում ձգված ճոպանի վրայով:



20 տոկոսը Եվրաբանկին, 4 տոկոսը՝ ցանցերի աշխատակիցներին, իսկ բաժնետոմսերի 5 տոկոսը կիրացվի Երեւանի ֆոնդային սակարանում, 20 տոկոսը կմնա պետության ձեռքում: «Ինչո՞ւ այս բանաձեւը» հարցին պրն Գալուստյանը պարզաբանեց, որ դիտարկվել են բոլոր հնարավոր տարբերակները՝ սկսած բաժնետոմսերի 100 տոկոս, 75 տոկոս վաճառից, մինչեւ 51 տոկոսից պակասը: Որոշվել է, որ 51 տոկոսն առավել համապատասխանում է պետության առաջադրած խնդրին. ռազմավարական գնորդին մղել ցանցերի հնարավորինս արագ եւ ամբողջական վերազինման: Այս նպատակով էլ Եվրաբանկն է ներգրավվել սեփականաշնորհմանը, քանզի Հայաստանը ռիսկային գոտի է, եւ ռազմավարական գնորդին անհրաժեշտ է երաշխիք, որ իր շահերն առավելագույնս պաշտպանված կլինեն, եւ ինքը մենակ չի զգա իրեն:

էներգետիկայի առաջին փոխնախարար Կարեն Գալուստյանը վերջերս հավաստեց, որ Հայաստանի կառավարությունը վճռել է 4 բաշխիչ ցանցերի սեփականաշնորհումն իրականացնել զույգ-զույգ, ընդ որում՝ մեր էներգետիկ անվտանգությունն ապահովելու նպատակով որոշված է չվաճառել 4 ցանցերը մեկ սեփականատիրոջ, այսինքն՝ ցանցերի սեփականաշնորհման մրցույթի հաղթողները կլինեն երկու ընկերություն, որոնք կմասնավորեցնեն զույգ ցանցերի բաժնետոմսերի 51-ական տոկոսը: Այսինքն՝ կարելի է կանխատեսել, որ կառավարությունը որդեգրել է կոմպլեմենտար խաղախականությունը: Երկու բաշխիչ ցանցեր կհատկացվեն AES-ին, որը կփորձի իրականացնել Ամերիկայի սիրելի «Մետաքսի ճանապարհը» մեր տարածաշրջանում (Silk Road նշանակում է մետաքսի ճանապարհ), իսկ մյուս երկու ցանցերը կմասնավորեցնի ռուսական կողմը՝ ի դեմս «Իտեռայի» եւ «Ռոսէներգոատոմի»: Կարելի է անգամ կանխատեսել, թե AES-ին ո՞ր ցանցերը կտրամադրվեն, ըստ ամենայնի՝ Երեւանի ցանցը եւ Հյուսիսայինը: Հյուսիսային ցանցը սպասարկում է աղետի գոտին, այստեղ առկա է մի լուրջ հանգամանք. Հյուսիսային ցանցն է կապված Վրաստանի հետ, իսկ Վրաստանին մենք էներգիա ենք վաճառում: Այսօր Թբիլիսիի ցանցի սեփականատերը AES-ն է, հետեւաբար վաճառված էներգիայի դիմաց վճարումները հնարավոր կլինի գանձել առանց միջնորդների՝ AES-ի հետ: «Իտեռային» կարող է բաժին ընկնել Կենտրոնական ցանցը, որի տիրույթում է ԱԷԿ-ը եւ Հարավայինը: Ժողովրդական տարածված այլաբանությամբ՝ եւ գայլերը կուշտ կլինեն, եւ ոչխարները՝ անվնաս:

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ

«Հերքում»-ի հերքում

«Ազգ» թերթի ս. թ. ապրիլի 7-ի համարում տպագրված է «Հերքում» հերյուրանքը, որում մասնավորապես նշվում է, որ «Ազատություն» ռադիոկայանին տված իմ հարցազրույցում իբր ես ներկայացել եմ որպես «Արցախ-Հայաստան» կազմակերպության նախագահ եւ որպես հիմք նշվում է թերթի ս. թ. ապրիլի 5-ի մի հրապարակումը:

Սխալված եմ մանրուքներից «գործ» սարքելու սիրահարներին հիասթափեցնել՝ «Ազատություն» ռադիոկայանի թղթակիցը ռադիոլսողներին ինձ ներկայացրել է որպես ակադեմիկոսի, «Արցախ-Հայաստան» կազմակերպության հիմնադիրներից մեկի, որի դեմ, կարծում եմ, նույնիսկ մանրադիտակով հակափաստարկ հնարավոր չէ գտնել (իմ մոտ առկա է նշված հաղորդման ձայնագրությունը): Ավելին, ես «Ազատություն» ռադիոկայանի թղթակցի հետ առանձնազրույցում խնդրել եմ հատուկ շեշտել, որ ես «Արցախ-Հայաստան» կազմակերպության նախագահը չեմ, որը եւ կատարված է թղթակցի կողմից: Սխալված էի զգուշացնել, քանի որ «Հայկական ժամանակ» թերթի թղթակիցը դրանից մի քանի օր առաջ ինձ հետ ունեցած հարցազրույցի վերաբերյալ հրապարակման նախաբանում սխալմամբ նշել էր (երեւի իմ նախագահ եղածի ինքնագիայով, ո՞ւմ հետ չի պատահում), որ ես եմ նշված կազմակերպության նախագահը, որի համար նա իր բանավոր ներողությունն է հետագայում արտահայտել ինչպես ինձ, այնպես էլ նշված կազմակերպության այժմյան նախագահին:

Տարօրինակ է, որ «Հերքում»-ի հեղինակ է նշված «Արցախ-Հայաստան» հասարակական-քաղաքական կազմակերպության վարչությունը: Հավաստի աղբյուրներից ինձ հայտնի է, որ «հերքման» հարց վարչությունում չի քննարկվել: Միաժամանակ որպես վարչության անդամի ինձ պարտավոր էին տեղյակ պահել: Ակնհայտ է, որ առկա է կազմակերպության վարչության անվան չարաշահ օգտագործում:

Հարկ եմ համարում հատուկ շեշտել, որ նշված հարցազրույցները ես տվել եմ իմ աշխատավայր այցելած թղթակիցների խնդրանքով որպես մասնավորական, այլ ոչ թե այն կամ այն կազմակերպության ներկայացուցիչ, որում հետս է համոզվել ինչպես տրված հարցերի բնույթից, այնպես էլ պատասխաններից:

ԼԵՆՄԵՐ ԱՂԱԼՈՎՅԱՆ

Սյունիք. Ավարտվեց օլիմպիադայի մարզային փուլը

Արդեն ամփոփված են օրերս Կապան մարզկենտրոնում անցկացված օլիմպիադայի մարզային փուլի արդյունքները, որին մասնակցեցին 39 հանրակրթական դպրոցների 7-10-րդ դասարանների 357 աշակերտներ:

– 13 առարկայից անցկացված օլիմպիադան կրկին հավաստեց, որ անկախ բոլոր դժվարություններից, սառանի ականջը խուլ, վաղը դեռի մեծ կյանք ենք ճամփելու իմացության հզոր պոտենցիալով, կանոնավոր պատրաստվածությամբ եւ մի սերունդ: Ցուցաբերած բարձր ակտիվությամբ, մրցանակային տեղերի թվով դպրոցների ցուցակը գլխավորում են Կապանի թիվ 1 հարուստ ավանդույթներով դպրոցը (տնօրեն՝ Հասմիկ Նահապետյան), Սիսիանի վարժարանը (տնօրեն՝ Հովիկ Ալեքսանյան), Մեղրու թիվ 1 (տնօրեն՝ Սիմոն Սարգսյան), Գորիսի թիվ 6 (տնօրեն՝ Արամայիս Փարսյան) դպրոցները: Ուրիշ բնագավառներում գուցե, բայց այստեղ՝ իմացության եւ ստուգատես-օլիմպիադաներում, ոչինչ պատահական չի արձանագրվում. հաղթում են լավագույն ուսուցիչների շնորհալի, օժտված սաները. «Ազգի» հետ ունեցած զրույցի ժամանակ ասաց մարզի կրթության վարչության պետի տեղակալ, օլիմպիադայի կազմկոմիտեի նախագահ, մանկավարժական գիտությունների թեկնածու Լեոնիկ Պետրոսյանը: 4, 3, 2 մրցանակային տեղերով մրցանակակիրների ցուցակը պսակեցին Արամ եւ Արթուր Օրբելյան եղբայրները, Արշակ Գալստյանը (Կապան, թիվ 1 դպ.), Հասմիկ Գեւորգյանը (Սիսիանի վարժարան), Անահիտ Սարգսյանը (Մեղրի, թիվ 1 դպ.), Լիլյա Շլունցը (Գորիս, թիվ 1 դպ.), Գագիկ Մկրտչյանը (Քաջարան, թիվ 1 դպ.) եւ ուրիշներ: Արձանագրվեց 137 մրցանակային տեղ:

ԼԵՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԱՄՆ

Ցեղասպանություն է... բայց

«Վաշինգտոն թայմս» թերթից Սթիվն Դինանի հոդվածը արտատպելով՝ «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի մարտի 18-ի համարը տեղեկացնում է, որ Վիրջինիայում (ԱՄՆ) բավական լուրջ վիճաբանություններից հետո սենատորները ի վերջո տեղի են տվել եւ ապրիլի 24-ը «Հայկական ցեղասպանության օր» ճանաչելու փոխարեն ընդունել են «Հայ նահատակների օր» տարբերակը:

Որոշումը միահամուռ է ընդունվել: Բայց հակասությունները բառերի ընտրության հարցում բավական սուր են եղել:

«Իմ կարծիքով անհրաժեշտ է, եւ մենք պարտավոր ենք «ցեղասպանություն» բառը ներառել, քանի որ դա հենց այն է, ինչ տեղի է ունեցել», ասել է նախագծի հովանավոր Էրիկ Քանտորը, որը նաեւ ներկայացրել է վկայություններ եւ փաստաթղթեր, որոնք ապացուցում են օսմանյան թուրքերի վայրագությունները:

«Այդ մարդիկ ինքնասպանություն չեն գործել: Ցեղասպանություն լանվանելը հարցը կոծկել է նշանակում», ավելացրել է Ֆերֆախից հանրապետական սենատոր Ուորեն Բարրին:

Եվ հակառակ, որ բոլոր սենատորները համաձայն են եղել այն հարցում, որ կատարվածը բոլորովին էլ քաղաքացիական պատերազմի հետեւանքը չի եղել, ինչպես պնդել եւ պնդում են բողոքի դուրս եկած ամերիկաբնակ թուրքերը, նրանք, այնուամենայնիվ, տեղի են տվել ըստ երեւույթին վերջիններիս բանեցրած ճնշումներին եւ բավարարվել «Նահատակների օրվա» հիշատակությամբ, ելնելով այն տրամաբանությունից, որ Վիրջինիայի որոշումով, միեւնույն է, ոչինչ չի փոխվի:

Մյուս կողմից, «Միրոր սփեքթեյթր» թերթի նույն համարից տեղեկանում ենք, որ սենատոր Չարլզ Փուլիկյանը (հանրապետական, Ֆրեզնոյից) որոշման մի նախագիծ է ներկայացրել՝ ապրիլի 24-ը Կալիֆոռնիայում «Հայկական ցեղասպանության հիշատակի օր» հռչակելու վերաբերյալ: «Հիշատակումը կարեւոր է ոչ միայն այն պատճառով, որ դարի ընթացքում հայերից հետո բազմաթիվ այլ ժողովուրդներ կամ ազգություններ են տուժել, այլ նաեւ այն պատճառով, որ ներկայիս Թուրքիայի Հանրապետության կողմից հսկայական գումարներ են ծախսվում կազմակերպված ձեւով վերաշարադրելու պատմական իրադարձությունները», նշել է Փուլիկյանն այդ առթիվ:

Որոշումը ներկայացնելու հարցում նրան են միացել սենատոր Ջեֆի Սփիերը, եւ ասամբլեայի անդամներ Էլեն Ալկուիսթը, Հոուարդ Կալուգյանը եւ Լու Պապանը:

Երեկ տեղեկացանք, որ Կալիֆոռնիայի Սենատը հավանություն է տվել այդ նախաձեռնությանը:

Իսրայել Չառնիի դասախոսությունը՝ ռադիոյով

Ապրիլի 11-ին, ժամը 2-3-ը ազգային եւ միջազգային խոշոր կապիտալիստական միավորումների կողմից հովանավորվող մրցանակների արժանացած «այլընտրանքային ռադիո» հաղորդաշարով Միացյալ Նահանգների Կոլորադո նահանգում հեռաստվերելու է Ողջակիզման եւ Ցեղասպանության գծով գիտնական Իսրայել Չառնիի դասախոսությունը «Ցեղասպանության ժխտումը» թեմայով, հաղորդում է «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթը: Գիտնականը փորձելու է դասակարգել ժխտումներն ըստ պատճառաբանվածության եւ հոգեբանական անդրադարձերի եւ բացատրել դրանց հետ համակերպվելու դառը հետեւանքները:

Չառնին գլխավոր խմբագիրն է վերջերս հրապարակված երկհատորանոց «Ցեղասպանության հանրագիտարանի», որն այդ թեմայի վերաբերյալ ամենահեղինակավոր ուսումնասիրությունն է համարվում:

«Այլընտրանքային ռադիո» ծրագրի պրոդյուսեր Դեյվիդ Պարսամյանը հայտնել է, որ արբանյակային հեռարձակման միջոցով հաղորդումը եթեր է արձակվելու նաեւ մի շարք այլ տեղական ռադիոկայաններով:

Հ. Ծ.

ԱԶԳ

տարածաշրջան

Հայ-ռումինական միջկառավարական հանձնաժողովը քննարկեց տնտեսական զարգացման հեռանկարները

Ինչպես տեղեկացրել ենք Բուխարեստից հղված մեր նախորդ հրապարակման մեջ՝ Հայաստանի նախագահն այդ հանդիպման ժամանակ առավել կարեւորում էր տնտեսական հարաբերությունների զարգացումը: Նշենք, որ Ռումինիան Հայաստանի անկախությունը ճանաչած առաջին երկիրն է եւ այդ ժամանակից ի վեր երկու երկրների միջեւ համագործակցության բազմաթիվ պայմանագրեր են կնքվել: Այդ թվում՝ առեւտրատնտեսական, միջազգային ավտոտրանսպորտային փոխադրումների, նաեւ՝ երկաթուղու, օդային տրանսպորտի օգտագործման առումով: Նախորդ հանդիպումների ժամանակ պատրաստակամություն էր հայտնվել ստեղծելու միջկառավարական հանձնաժողով, որը պետք է համանախագահեին երկու երկրների տրանսպորտի նախարարները:

Հայաստանից մեկնած պաշտոնական պատվիրակության կազմում ընդգրկված էին տրանսպորտի եւ կապի նախարար Ռոբերտ Նազարյանը, տնտեսական ոլորտով զբաղվող մի խումբ պաշտոնյաներ՝ առեւտրաարդյունաբերական պալատի տնօրենը, զարգացման գործակալության գործադիր տնօրենը եւ այլք: Բուխարեստում գտնվելու երկու օրերին պատվիրակության մասնակցությամբ հայ-ռումինական միջկառավարական հանձնաժողովի նիստ գումարվեց: Հանդիպման մասին Ռումինիայի նախագահը հայտնեց. «Հայկական կողմի հետ համաձայնեցրինք, որ փոխադարձաբար հետաքննենք առեւտրափոխադրումները եւ քաջալերենք գործարար շրջանակին...»: Նիստի վերաբերյալ ՀՀ տրանսպորտի նախարարը տեղեկացրեց, որ պայմանավորվածություններ ձեռք բերվեցին հետագա անելիքների համար՝ գործարար աշխարհի միջոցով օգտվել Կոնստանցա նավահանգստի հնարավորություններից՝ առաջիկայում նկատի առնելով Իրան-Հայաստան-Կոնստանցա տարանցիկ գոտու վերականգնումը: Համագործակցության պայմանագրեր կնքվեցին նաեւ երկու երկրների առեւտրաարդյունաբերական պալատների ու զարգացման գործակալությունների միջեւ:

Հայաստանի զարգացման գործակալության գործադիր տնօրեն Վահագն Մովսիսյանին խնդրեցինք մեկնաբանել համագործակցության պայմանագրի բովանդակությունը: «Երկու երկրներն էլ գտնվում են զարգացման փուլում, նրանք ներդրումների եւ արտահանման հետ կապված խնդիրներ ունեն: Մենք ոչեմ է տեղեկություն փոխանակենք, փորձենք ինկուբատոր ստեղծել, որտեղ կտեղադրվեն երկու կողմերի բիզնես-ծրագրերը, այն ստրատեգիկ ներդնող հայտաբերելու հնարավորություն կտա մեզ: Կարեւորում ենք նաեւ տեղեկատվության փոխանակման դերը: Հայաստանի եւ Ռումինիայի միջեւ առեւտրային բալանսը բավականին տխուր է, ընդհանրապես Հայաստանից Ռումինիա արտահանում չի իրականացվել, իսկ ռումինական տվյալներով, նրանք 2 մլն դոլարի արտահանում են իրականացրել Հայաստանում եւ, այդ առումով, միջոցառումների ցանկ ենք նախատեսել», հայտնեց պրն Մովսիսյանը՝ նշելով, որ ռումինական շուկան բավականին հետաքրքրական է:

Հայաստանը հանդես է եկել Ռումինիա-Վրաստան-Հայաստան եռակողմ եվրասարածաշրջանային համագործակցություն հաստատելու առաջարկով: 97 թ. հուլիսին երեք երկրների տրանսպորտի նախարարությունները ռումինական շահագրգռված է օգտագործելու այս հնարավորությունները Հայաստանի ու Վրաստանի տարածքով ամենակարճ ու ամենաէժան ճանապարհն առաջարկելով դուրս գալ Մեծավոր ու Միջին Արեւելք: Հայաստանի ու Վրաստանի համար այս միջանցքի բացումն առավել կարեւոր է իրենց տարածքները որպես տարանցիկ ճանապարհ օգտագործելու իմաստով: Կոնստանցայում տեղի հայ գործարարների հետ ունեցած հանդիպման ժամանակ վերջիններս ՀՀ նախագահին առաջարկում էին նաեւ Երեւան-Բուխարեստ թռիչք գործարկել:

Ռումինահայ համայնքը ջանում է պահպանել իր շուրջն ստեղծած փոքրիկ Հայաստանը

Ռումինահայ համայնքը հնագույններից է, սկզբնավորումը հաշվվում է 10-11 դարերից, երբ Անիի կործանումից հետո փախստական հայերի մի զգալի զանգված հաստատվել է Մոլդովայի տարածքում: Սակայն, Ռումինիայում հայերի հաստատման պաշտոնական տարեթիվը համարվում է 1351 թ.՝ առաջին եկեղեցու հիմնադրությունը: Արտագաղթի երկրորդ մեծ ալիքը 17-րդ դարում է եղել, բայց հիմնականում հայերը Ռումինիայում հաստատվել են 1915 թ. ցեղասպանությունից հետո: Ռումինիայում Հայաստանի դեսպան Կարինե Ղազինյանի վկայությամբ, 25-30 հազարանոց համայնք է եղել, բայց Նիկոլայ Չաուշեսկուի ռեժիմի ժամանակ շատերը հեռացել են հիմնականում Արգենտինա, ԱՄՆ: Դեսպանի ասելով, շատ գործարարներ հիմա վերադառնում են, քանի որ երկրի էժան աշխատուժը նրանց համար նպաստավոր է:

Ռումինիայից արտագաղթելուց բացի, պատմական իրադարձությունների բերումով հայության մի որոշ մասը կաթոլիկություն է ընդունել եւ ժամանակի ընթացքում ձուլվել է: Ձուլման պատճառներից մեկն էլ խառն ամուսնություններն են եղել: Պաշտոնական տվյալներով, ներկայումս Ռումինիայում 3000 հայ է ապրում, իսկ ոչ պաշտոնական տվյալներով՝ շատ ավելի քիչ: Հայությունը հիմնականում կենտրոնացած է երկու խոշոր քաղաքներում՝ Բուխարեստում ու Կոնստանցայում: «Հայերենով արդեն տարեցներն են միայն խոսում, չնայած կիրակնօրյա դպրոց կա, բայց քանի որ արդեն խառն ամուսնություններ են, լեզուն քիչ է պահպանվում: Քիչ են, բայց հարգված համայնք են, երբեք խնդիրներ չեն ունեցել, ընդհակառակը՝ նպաստել են Ռումին պետականության կայացմանը, եւ բոլորը դա նշում են: Այստեղ ավանդական կուսակցություններ չկան, Ռումինիայի հայոց միությունն ու եկեղեցին հավասարազոր են: Հայկական ավանդույթները պահպանել են, հայությունն ամեն չորեքշաբթի հավաքվում է Հայոց միությունում, այնտեղ կազմակերպում են մշակութային միջոցառումներ, երեկոներ», իր տպավորությունները **«Ազգին»** փոխանցեց տիկին Ղազինյանը:

Բուխարեստի հայկական եկեղեցու բակում գործում է կիրակնօրյա հայկական դպրոցը, որտեղ ուսանում են 30 երեխաներ: Հայության հետ ունեցած զրույցների ժամանակ նշում էին, որ իրենց երեխաների ծգտումը եվրոպան է եւ ջանում են անգլերեն ու համակարգիչ ուսանել, եվրոպական կրթություն ստանալ: Նույն երեւույթը ռումինացիների մոտ էր, որոնք հայտնում էին, թե վերջին տասը տարում արտագաղթել է երկրի բնակչության 30-40 տոկոսը, հատկապես երիտասարդությունը: Հայտնենք, որ ռումինահայ համայնքը վերջին տարիներին չի համալրվել հայաստանաբնակներով: Պատճառն, իհարկե, երկրի սոցիալական ոչ բարվոք վիճակն է: Այնուամենայնիվ, մենք հանդիպեցինք 85 թ.-ից Բուխարեստում մշտական բնակություն հաստատած Մաքսն Տեր-Ղուկասյանին, որը «Նոր կյանք» ամսաթերթի չորս հոգանոց խմբագրակազմի անդամներից մեկն է:

Ռումինիայի հայոց միությունը լույս է ընծայում երկու թերթ՝ «Նոր կյանքը», որը տպագրվում է երկու լեզուներով եւ ռումինատառ «Արարատը»: Մ. Տեր-Ղուկասյանը տեղեկացրեց, որ «Նոր կյանքը» 2000 տպաքանակ ունի, տիրաժի մյուս գաղթօջախների՝ Գերմանիայի, Չեխիայի, Հունգարիայի եւ այլնի հետ թղթակցական կապը բավականաչափ ամուր է: Սակայն, Հայաստանի մասին տեղեկությունները ստանում են ոչ թե հայրենական մամուլից, այլ՝ տիրաժների թերթերից: Համայնքն ունի իր սեփական տպարանը, որտեղ եւ տպագրվում են նշված թերթերը:

Ռումինահայ համայնքն առաջին անգամ էր ընդունում Հայաստանի նախագահին: «Հաճելի է լսել իշխանությունների գնահատականը հայության մասին: Լինելով փոքրաթիվ, բայց ազդեցիկ, հարգված, մեծ ներդրում ունեցող ռումինական պետության կայացման գործում: Երկրի նախագահն ու Սենատի նախագահը շատ ջերմ են արտահայտվում: Ուժը քանակի մեջ չէ, նաեւ որակի մեջ է, պատմական արժեքների մեջ է, որը մեր ազգն իր մեջ կրում է», իր տպավորությունները համայնքին փոխանցեց Ռոբերտ Քոչարյանը: Լրացնելով Հայաստանի նախագահի այս միտքը՝ թեմական առաջնորդ Տիրայր արքեպիսկոպոսը հայտնեց, որ համայնքի նկատմամբ երկրի իշխանությունների բարեհաճ վերաբերմունքը վաղուց է ձեւավորվել: Մասնավորապես, երբ Անդրանիկ զորավարը մերժել է Բուլղարիայի իշխանությունների առաջարկը՝ Բալկանյան պատերազմում կռվել Ռումինիայի դեմ, կառավարությունը հայկական եկեղեցու կողքին տեղադրել է զորավարի կիսանդրին՝ «Հայ ազգային հերոս» երկլեզու գրությամբ:

Համայնքի մշակութային հարստությունն են կազմում Հայ մշակույթի տան արվեստի հարուստ թանգարանը, որտեղ 40-ից ավելի ձեռագիր մատյաններ են պահվում, ինչպես նաեւ Ավագյան եւ Զամբախչյան թանգարանները: Բիատրիս եւ Հրանտ Ավագյան հավաքածուն, որում ընդգրկված էին աշխարհի ժողովուրդների, հատկապես արեւելյան արվեստի լավագույն նմուշները, Հրանտ Ավագյանի գեղանկարչական կտավների հետ սահմանի թանգարանի են վերածել նկարչի տունը: Գեղանկարների հարուստ հավաքածուով նրան չէր գիջում հայտնի կոլեկցիոներ Զամբախչյանի թանգարանը, որը նրա առանձնատունն էր եւ գտնվում էր իր իսկ անունը կրող փողոցում:

ՍԱՌԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ,
Բուխարեստ-Երեւան

Էդուարդ Շեւարդնաձեն վերընտրվեց Վրաստանի նախագահ

Սկիզբը էջ 1

Ընտրությունների անմիջապես ավարտին Զումբեր Պատիաշվիլին ուղիղ հեռուստալուսաբերությամբ հայտարարեց իր պարտության մասին, հիշեցնելով, որ ողջ Վրաստանի պետական մեքենան աշխատում էր նախագահ Շեւարդնաձեի համար: Ելույթ ունեցան ընդդիմադիր այլ գործիչներ, որոնք խոսում էին «տեղի ունեցած կեղծիքների» եւ ընդհանրապես ընտրություններում կիրառվող «կեղտոտ տեխնոլոգիաների» մասին: Այս պահին դժվար է ասել՝ «ազատ, արդար, թափանցիկ» են եղել կիրակնօրյա ընտրությունները, թե՞ ոչ: Սակայն ընտրատարածքներում եւ մայրաքաղաք Թբիլիսիում տիրող մթնոլորտը այլ բան էր հիշեցնում. նախ չէր նկատվում որեւէ լարվածություն, բացի այդ, իշխանությունները սովորաբար կեղծիքներ են դիմում, երբ դրա անհրաժեշտությունն զգացվում է: Էդուարդ Շեւարդնաձեի հաղթանակին ոչ ոք չէր կասկածում հատկապես այն բանից հետո, երբ Աջարիայի Գերագույն խորհրդի նախագահ Ասլան Աբաշիձեն ընտրությունների նախօրեին իր թեկնածությունը հանեց հօգուտ Շեւարդնաձեի: Սա ընտրությունների ինտրիգն էր, սենսացիան: Եվ Աբաշիձեն, եւ Պատիաշվիլին ներկայացնում են միեւնույն՝ «Բաթումի դաշինքը», անցնող խորհրդարանական ընտրություններում հանդես են եկել մեկ միասնական ընտրացուցակով, երկուսն էլ տարիներ շարունակ եղել են նախագահ Շեւարդնաձեի ընդդիմադիրները, [illegible]բեմն էլ թշնամիները...

Ի դեմ, «Աջարիայի առյուծը» մինչ ապրիլի [illegible] չէր ակնկալում ընտրապայքարից հրաժարվելու մասին: Ընտրություններից երկու օր առաջ [illegible] լրագրողների հետ հանդիպման ժամանակ, նա ասաց, թե դեռ մտորելու ժամանակ ունի: Ամենայն հավանականությամբ Շեւարդնաձեի եւ Աբաշիձեի միջեւ պայմանավորվածություն ձեռք բերվեց հենց ապրիլի 6-ին, երբ Բաթումում տեղի ունեցավ նրանց հանդիպումը: Հանդիպման ընթացքում խոսակցություն է գնացել Աջարիայի ապագա սահմանի՝ կարգավիճակի շուրջ: Հանդիպումից հետո նախագահ Շեւարդնաձեն ասաց. «Եթե Աջարիայի կարգավիճակը չորոշվի, վստահ եմ՝ վեճերը դեռ երկար կշարունակվեն: Աջարիայի ինքնավար կարգավիճակը պետք է սահմանադրական եղանակով ամրագրվի»: Այն, ինչը տարիներ շարունակ Աբաշիձեն էր պահանջում Վրաստանի խորհրդարանից, կիրականանա մոտ ժամանակներում, եթե, իհարկե, երկու առաջնորդների պայմանավորվածությունը չխախտվի: Հաշիվ առնելով, որ խորհրդարանում Շեւարդնաձեն ունի հենարան՝ ի դեմս «Վրաստանի քաղաքացիների միության», պետք է ենթադրել, որ շուտով Աջարիան կդառնա ինքնավար հանրապետություն: Չի բացառվում նաեւ, որ մոտ ժամանակներում ինքնամյա ընդմիջումից հետո Աբաշիձեն ժամանի Թբիլիսի: Այո, արդեն ինը տարի «Աջարիայի առյուծը» չի տեսել կիսախավար Թբիլիսին, չթաքցնելով, որ այստեղ կսպանվի... Շեւարդնաձեի «ձեռքով»: Ի դեմ, խորհրդարանի նախագահ Զուրաբ Ժվանիան արդեն հայտարարել է. «Եթե Աջարիայի առաջնորդը ժամանի Թբիլիսի, գործի կդրվեն նրա կյանքի անվտանգությունն ապահովող բոլոր միջոցները»:

Կիրակի երեկոյան Ասլան Աբաշիձեն ուղիղ հեռուստալույսում ասաց, որ Զումբեր Պատիաշվիլուն այլեւս չի համարում համախոհ, իսկ «Բաթումի դաշինքի» ապագային այնքան էլ վստահ չէ:

72-ամյա Շեւարդնաձեն վերընտրվեց Վրաստանի նախագահ: Ինչո՞ւ ժողովուրդը ձայն տվեց հենց նրան: Ի՞նչ է փոխվել պրն Շեւարդնաձեի առաջին գահակալության հինգ տարիներին: Շատ բան. ժողովրդի սոցիալական վիճակն ավելի է վատթարացել, դեսպանատների առջեւ օտարության հերթերը չեն նոսրացել, ամենուր գործազրկություն է, հարուստներն ավելի են հարստացել, աղքատներն՝ ավելի չքավոր դարձել... Սակայն այդ ամենի հետեւում մի գաղտնիք է թաքնված հենց Շեւարդնաձեի անվան հետ են կապում վրաց-աբխազական եւ վրաց-հարավօսական հակամարտությունները զսպելը, մարդիկ ցանկանում են ունենալ կանխատեսելի ու սթափ առաջնորդ: Վրաստանի առաջին նախագահ Զվիադ Գամսախուրդիայի հետ համեմատած Շեւարդնաձեն առավել ընդունելի է:

Էդուարդ Շեւարդնաձեն ընտրողներին խոստացել է մոտակա հինգ տարիներին կարգավորել վրաց-աբխազական հակամարտությունը, տուրք 250 հազար փախստականներին ետ ուղարկել մշտական բնակավայրեր, կարգավորել հարավօսական խնդիրը, վերացնել գործազրկությունը, ժողովրդին հանել աղքատության ճիրաններից... Շեւարդնաձեին ձայն տված ընտրողները թեեւ վստահ չեն վերոնշյալ խնդիրները հինգ տարիների ընթացքում կարգավորելու մեջ, սակայն վստահ են, որ միայն Շեւարդնաձեն կարող է ինչոր բան անել:

Աբխազիան եւ Հարավային Օսիան չմասնակցեցին նախագահական ընտրություններին

Հարավային Օսիայի խորհրդարանը ընդունեց հայտարարություն, որտեղ բողոք է հայտնվում առ այն, որ «Թբիլիսիի իշխանությունները փորձել են Հարավային Օսիայի վրացաբնակ գյուղերում անցկացնել Վրաստանի նախագահի ընտրությունները»՝ այս քայլը համարելով Հարավային Օսիայի ներքին գործերին միջամտելու փորձ: Հիշեցնենք 1992 թ. հունվարի 19-ին այս տարածաշրջանում անց է կացվել հանրաքվե, եւ բնակչության 98 տոկոսը ցանկացել է լինել բնակիչը «Հարավային Օսիայի» անկախ հանրապետության:

Վրաստանի մեկ այլ տարածաշրջանում դեռ ֆակտո անկախ, սակայն ոչ ոքի կողմից չճանաչված Աբխազիայում,արդեն անց են կացվել նախագահական ընտրություններ: Անցյալ աշնանը աբխազները քվեարկել են Վլադիսլավ Արձինբայի օգտին...

Վերջին պահին

Նախնական տվյալների համաձայն ձայները բաշխվել են հետեւյալ համամասնությամբ (տոկոսներով).

Էդուարդ Շեւարդնաձե-80,7
Զումբեր Պատիաշվիլի-17
Ավթանդիլ Զոգլիձե-0,2
Վաժա Ժղենտի-0,2
Թենգիզ Ասանիձե-0,2
Քարթլու Ղարիբաշվիլի-0,3:

ԱԶԳ

Կարարագիր

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ՓՈԽՆԱԽԱԳԱՀ ԱԼԲԵՐՏՈ ԲԻՈՆԴԻ. Նախագծի ընդհանուր դրույթների քննարկումը հայտարարում եմ բացված:

Առաջինը խոսք է խնդրել պատգամավոր Ջանկարլո Պալյարինին, որը կներկայացնի նաեւ հ. 1-00303 նախագիծը: Խնդրեմ:

ՋԱՆԿԱՐԼՈ ՊԱԼՅԱՐԻՆԻ. Պարոն նախագահ, պարոնայք պատգամավորներ, մի քանի օր առաջ՝ մարտի 6-ին, Հռոմի Քաղաքային խորհուրդը միաձայն որոշում է ընդունել, որով «համարում է անհրաժեշտ, որպեսզի միջազգային հանրությունը հանդես գա հանուն հայ ժողովրդի շահերի, ինչպես դա տեղի ունեցավ հրեաների Հոլոքոստի դեպքում»: Բացի այդ, Քաղաքային խորհրդի անդամները դիմել են իտալական կառավարությանը՝ Հայոց ցեղասպանությունը ճանաչելու կոչով:

Նախկինում նման փաստաթղթեր են ընդունել նաեւ Միլանի, Ֆլորենցիայի եւ շատ այլ մեծ եւ փոքր քաղաքների խորհուրդներ, Պադովայից մինչեւ Բանյակավալլո: Հայոց ցեղասպանությունը ճանաչած քաղաքների թիվն արդեն 33 է, վերջինը Բելլունոն էր՝ ուղիղ մեկ շաբաթ առաջ:

Մեր երկրի սահմաններից դուրս Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչվել է ՄԱԿ-ի մարդու իրավունքների ենթահանձնաժողովի, Եվրախորհրդի, շատ պետությունների եւ հասարակությունների կողմից: Վերջինս ըստ ժամանակագրության Շվեդիայի խորհրդարանն էր, որը պաշտոնապես ճանաչեց ցեղասպանությունը մի քանի օր առաջ՝ մարտի 29-ին:

Բոլոր նրանց թվարկումը, ովքեր պաշտոնապես ճանաչել են այս ցեղասպանությունը, շատ ժամանակ կխլի: Ես նախագահությանն եմ ներկայացրել այդ ցանկը եւ խնդրել եմ կցել այս քննարկման սղագրված տեքստին:

ՆԱԽԱԳԱՀ. Նախագահությունը համաձայն է:

ՋԱՆԿԱՐԼՈ ՊԱԼՅԱՐԻՆԻ. Իտալիայի խորհրդարանը, սակայն, դեռ դյուրազգացություն եւ համարձակություն չի ունեցել ճանաչելու այս ողբերգական պատմական ճշմարտությունը: Մինչ օրս այդ ցեղասպանության բնութագիրն է եղել լռությունը: Մարդասպանների լռությանը գումարվեց պետությունների, զոհերի, դիվանագիտության եւ մարդկային խղճի լռությունը: Քիչ թվով հայերի է հաջողվել խուսափել սպանդից, փախել են աշխարհի բոլոր հաղթակիրթ երկրները եւ անմիջապես սկսել են աշխատել:

Հարգել են իրենց հյուրընկալող երկրների օրենքները, ընտանիքներ են ստեղծել, չեն խոսել մահից ազատվելու համար հարկադրաբար թողած իրենց հողերի մասին: Եվ չեն խոսել իրենց մեռյալների մասին:

Սկզբից ընտրել են լռությունը՝ վերադարձելու համար, կարծես փորձել են մոռանալ՝ խաղաղություն գտնելու համար նոր կյանքում: Սակայն լքված տան հիշողությունը հավերժ է, եւ սպանված բարեկամներիդ ու ազգականներիդ հիշատակը հնարավոր չէ մոռանալ՝ կարող ես լռելյայն կրել այդ բեռը, բայց հիշողությունը փոխանցվում է հայրերից որդիներին, եւ ժամանակի ընթացքում մարդու խղճի լռությունը հետզհետե դառնում է անտանելի: Մենք եւ Եվրամիության մաս կազմող մյուս 14 երկրների խորհրդարանի անդամ մեր գործընկերները պարտավոր ենք ընդմիջել խղճի այդ լռությունը եւ մեր նպաստը բերել, որպեսզի Եվրամիության անդամ բոլոր երկրները հասարակամորեն ազդարարեն եւ հիշեն պատմական այդ ճշմարտությունը:

Ճանաչելով հայ ժողովրդի ցեղասպանությունը, Իտալիան եւ Եվրոպական պետությունները, որոնք աղասան են տվել սակավաթիվ վերադարձների, կճանաչեն նրանց ինքնությունը եւ վերջապես բարոյական հոգեհանգիստ կմատուցեն ցեղասպանության զոհերին:

Այսօր իմ պարտքն է փորձել խիստ հակիրճ ներկայացնել ձեզ փաստերը: Մեծարգո պատգամավորներ, խնդրում եմ հաշվի առնել հետեւյալ կետերը.

Հայերն ու թուրքերն ավելի քան ութ դար ապրել են կողք-կողքի փափկանկաս հավասարակշռության եւ փոխադարձ հանդուրժողականության պայմաններում: Օսմանյան կայսրությունը քրիստոնյա փոքրամասնություններին կրոնի եւ լեզվի ազատություն էր շնորհել: Սակայն Օսմանյան կայսրությունում բոլոր «անհավասները», այսինքն քրիստոնյաներն ու բոլոր ոչ մահմեդականները երկրորդ կարգի քաղաքացիներ էին համարվում. չէին կարող զենք կրել, չնչին իրավունքներ ունեին եւ հարկադրված էին հատուկ հարկեր վճարելու:

1914 թ. Օսմանյան կայսրությունը Ավստրիայի եւ Գերմանիայի կողքին պատերազմի մեջ մտավ: Հայերը, որ ապրում էին Օսմանյան կայսրության կովկասյան շրջաններում, հայտնվեցին երկու ճակատում: 1914 եւ 1915 թթ. թուրքական բանակը Կովկասում, Սարիղամիշի տակ, կործանարար պարտություն կրեց, եւ մեղքը բարդվեց հայերի վրա, որոնք մեղադրվեցին դավադրության մեջ:

1915 թ. փետրվարի 25-ին օսմանյան գլխավոր շտաբը հրաման արձակեց բոլոր հայ զինվորներին զինաթափելու:

1915 թ. ապրիլի 24-ի գիշերը Կոստանդնուպոլսում ապրող հայերը բանտարկվեցին: Կոտորածն սկսվել էր, եւ Արեւմուտքի պետությունները գիտեին այդ մասին:

1915 թ. մայիսի 27-ին մի օրենք ընդունվեց, որը լիազորում էր կասկածյալ անձանց բռնի տեղահանությունը: Այդ օրենքը լիազորություններ էր տալիս զինվորական հրամանատարներին՝ բռնի տեղահանել դավաճանության եւ լրտեսության մեջ կասկածվող քաղաքացիներին: Իրականում այդ օրենքը հավանություն էր տալիս կանխամտածված եւ նպատակաուղղված մի ողջ ժողովրդի զանգվածային տեղահանություններին եւ սպանություններին: Բազմաթիվ վկայություններ կան հաստատող, որ գործ ունենք սիստեմատիկ եւ կազմակերպված ոչնչացման մի գործընթացի հետ:

Եթե չէին էլ սպանում, հայերին շարքերով, հետիոտն, բռնի քշում էին դեպի Սիրիա, Դեր էլ Զորի անապատը: Այնքան էին սիրում քայլել, մինչեւ բոլորը մեռնեն:

Այս է, դժբախտաբար, պատմությունը: Ահա ոչ վաղ անցյալի թվերը, որոնք պետք է իմանալ: Դարասկզբին Թուրքիայում ապրում էր 1.800.000 հայ: Մոտ 700.000-ը սպանվեցին իրենց բնակության վայրերում եւ մոտ 600.000-ը մահացան բռնագաղթի ժամանակ: 200.000-ն էլ փախան Կովկաս: 150.000-ը կարողացան փախչել Եվրոպա: Թուրքիայում վերադարձ 150.000-ից պակաս հայ: Անատոլիայում 3000 տարի ապրող հայության 70 տոկոսից ավելին ոչնչացված էր:

Սրանք են Հայոց ցեղասպանության հաշվեկշիռը ներկայացնող թվերը: Ոչ շատ տարիներ առաջ է պատահել՝ դարասկզբին: Նացիստները դեռ իշխանության չէին եկել, եւ բազմաթիվ հրեաներ դեռ խաղաղ ապրում էին Գերմանիայում եւ Իտալիայում: Հիտլերը, 1932 թ. օգոստոսի 22-ին, Լեհաստան մտնելուց առաջ, Օբերզալցբերգում մի ժողովի ժամանակ հայտարարել է.

«Ո՞վ է այդ օրից հետո խոսում այսօր հայերի ոչնչացման մասին»:

Մարդկության պատմության այս սեւ էջին վերաբերող վկայություններն շատ շատ են: Գերմանացի Արմին Վեգների ողբերգական լուսանկարներից բացի բազմաթիվ փաստաթղթեր գոյություն ունեն, որոնցից մեջբերեմ միայն երեքը. «Բռնագաղթի կատարման ձեւն առաջացնում է, որ կառավարությունը իրապես հետաքրքրվում է Օսմանյան կայսրությունում հայկական ցեղի ոչնչացման նպատակ»:

Սա Թուրքիայում Գերմանիայի դեսպան Հանս Ֆոն Վանգենհայմի 1915 թ. հուլիսի 7-ի նամակից է:

«Գաղտնիք չէ, որ նախատեսված ծրագիրը պարունակում է հայոց, իբրեւ ցեղի, ոչնչացումը»:

Սա Անատոլիայում ԱՄՆ հյուպատոս Լեսլի Դեյիսի վկայությունն է՝ գրված 24 հուլիսի 1915 թ.»:

«Մեզ մեղադրում են մեղավոր եւ անմեղ հայերի միջեւ տարբերություն չդնելու մեջ. դա բացարձակապես անհնար է, քանի որ այսօրվա անմեղները գուցե վաղվա մեղավորներն են դառնալու»:

Այսպիսի հրաման է տալիս ներքին գործերի նախարար Թալեաթ փաշան 1915 թ.:

Ինձ հայտնի է, որ 1919 թ., Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո, երբ ընկնում է երիտթուրքերի կառավարությունը, Թուրքիայի նոր կառավարության զինվորական դատարանը մահվան է դատապարտում ցեղասպանության երեք գլխավոր պատասխանատուներին: 1919 թ. դատարանի մեղադրանքն էր կոտորածը եւ ոչ ցեղասպանությունը: Հետագայում Թուրքիայի պետությունը միշտ ժխտել է ցեղասպանություն իրագործելու փաստը: Պաշտոնական վարկածն այն է, որ բռնի տեղահանումները հրահանգվել են ապստամբությունը զսպելու նպատակով: Դժվար է այս թեզն ընդունել նաեւ այն պատճառով, որ բռնագաղթը կատարվել է դեպի Սիրիա՝ Դեր էլ Զորի անապատ, ուր էլերն են տեղ հասել եւ ուր անհնաս է կարծել, որ մարդ արարածը կկարողանար վերապրել առանց ջրի եւ առանց սննդի՝ բուսականությունից զուրկ լեռ անապատում:

Եվրախորհրդարանը հաստատում է, որ Թուրքիայի պետությունը, հրաժարվելով ճանաչել 1915 թ. ցեղասպանությունը, մինչ օրս զրկել է եւ շարունակում է զրկել հայ ժողովրդին սեփական պատմության իրավունքից:

Ձեզ պետք է տեղեկացնեմ նաեւ մեկ այլ բան: 1998 թ. մայիսի 29-ին Ֆրանսիայի Ազգային ժողովի մեր գործընկերները միաձայն օրենք են ընդունել Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչելու մասին: Դա մարդասիրական եւ քաղաքացիական խիզախության արտակարգ դրսեւորում է Ֆրանսիական խորհրդարանի կողմից: Անկարայի կառավարությունը շատ կոշտ արձագանքեց դրան՝ սպառնալով Փարիզի դեմ առեւտրական սանկցիաներ կիրառել: Այսպես ուրեմն, գործընկերներ, համարյա երկու տարի է անցել, սակայն այդ օրենքը մինչ օրս չի քննարկվել Ֆրանսիայի Հանրապետության Սենատում, եւ այսօր առավոտյան տեսա, որ պատգամավորներին, Կամերայի բոլոր անդամներին էլեկտրոնային փոստով նամակներ են ուղարկվել, որոնցում ասվում է, որ Ֆրանսիական Սենատը, ի տարբերություն Ազգային ժողովի, հրաժարվել է քննարկել այս նյութը՝ պատճառաբանությամբ, որ սահմանադրությամբ Սենատին նման բան արտոնված չէ:

Ահա մի քաղվածք այդ օրերի տեղեկատվություններից.

29 մայիսի, Թուրքիայի ԱԳ նախարար Իսմայիլ Ջեմ. «Դատապարտում եմ այդ որոշման ընդունումը, որը Թուրքիայի եւ Ֆրանսիայի միջեւ հարաբերությունների վրա բացարձակ ազդեցություն կունենա»:

30 մայիսի. «Թուրքիան վերանայում է իր հարաբերությունները Ֆրանսիայի հետ եւ պատժամիջոցներ է պատրաստում Փարիզի դեմ /.../ սպառնալով դիմել այնպիսի հակադարձ քայլերի, ինչպիսին է Ֆրանսիայի ընդգրկումը «կարմիր ցուցակում»՝ բոլոր այն երկրների ցանկում, որոնց հետ բացառվում է առեւտուրը ռազմական բնագավառում»:

2 հունիսի. «Թուրքիայի խորհրդարանն այսօր դատապարտեց Ֆրանսիական խորհրդարանին...»:

5 հունիսի. «Ֆրանսիայի Ազգային ժողովի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչելու հետեւանքով խափանվեց Ֆրանսիական Aerospatiale-ի եւ թուրքական արդյունաբերության միջեւ Eryx հրթիռների արտադրության վերաբերյալ 2,7 միլիարդ ֆրանկ արժողությամբ պայմանագրի ստորագրումը»:

Այս հակազդեցության դրդապատճառները կարող են բազմաթիվ լինել: Մեկը եւ ոչ երկրորդականն, այն է, որ սկսելով Հայոց ցեղասպանության ճանաչումով, միջազգային հանրային կարծիքը կարող էր ճանապարհ ընկնել, հասնելով մինչեւ մեր օրերը եւ Քրդստանում խաղաղություն հաստատելու անհրաժեշտության գաղափարին:

Կարծում եմ, իմ պարտքն էր անել այս մեջբերումները, հաղորդել ձեզ այն ամենը, ինչ ես գիտեմ, որպեսզի դուք կարողանաք լիիրավ գիտակցությամբ քվեարկել: Հայոց ցեղասպանությունը ճանաչած քաղաքների շարքում է նաեւ Իմոլան, եւ ես այստեղ 1998 թ. մայիսի 18-ի մի տեղեկություն ունեմ, ուր գրված է. «Թուրքիան, սակայն, չի սահմանափակվում բողոքելով եւ պահանջում է այն, ինչը Իմոլայում համարում են խորհրդի բոլոր անդամների, սկսած նախագահից, «ցուցակավորում»՝ քանիսն են, ինչ քաղաքական խմբերի են պատկանում եւ այլն»:

Կարող եմ բազմաթիվ նման այլ դեպքեր բերել, ընդհուպ անցյալ երեքշաբթի՝ մարտի 28-ի «Լա Սամպա» օրաթերթը, ուր կարելի է կարդալ. «Մի քանի շաբաթ առաջ Հռոմի Քաղաքային խորհուրդը քվեարկել է 1915 թ. թուրքերի կողմից իրագործված Հայոց ցեղասպանության ճանաչման օգտին: Նախաձեռնողները չէին թաքցնում իրենց մտադրությունը՝ նույնը կրկնել նաեւ խորհրդարանում: Նույնիսկ միայն ցեղասպանության ճանաչման օգտին վերջինիս քվեարկելու հնարավորության ենթադրությունից ծնունդ առավ Ֆարնեզինայի դեմ Անկարայի դիվանագիտական եռանդուն միջամտությունը՝ զգուշացնելու համար, թե որքան ծանր հետեւանքներ կարող է ունենալ նման որոշումը»:

Անցած շաբաթ հեռաձայնեցի Ֆարնեզինա (Իտալիայի ԱԳՆ) եւ ինձ ասացին, որ «պահը հարմար չէ»: Այսինքն, գործընկերներ, կառավարությունն ու դիվանագիտությունը քաջ գիտակցում են, որ պետք է որոշակի հակազդեցության սպասենք: Բոլորս պետք է դա գիտակցենք: Այս նյութի շուրջ խնդրում եմ նախ եւ առաջ սա հաշվի առնել, 1997 թ. հունիսին մեր գործընկերներ Լեոնին, Չենտոն եւ Տարադաշը հարցաքննում էին ներկայացրել, որով դիմում էին կառավարությանը՝ ճանաչել Հայոց ցեղասպանությունը, ինչպես դա առաջարկվում է Եվրախորհրդարանի 1987 թ. որոշմամբ: Կառավարության պատասխանը ստորագրված այն ժամանակվա ԱԳՆ փոխնախարար Պատրիցիա Տոյայի կողմից, հետեւյալն էր. «Տարածաշրջանում տեւական լարվածությունների առկայության պատճառով նպատակահարմար չէ, համենայն դեպս այս պահին, կառավարական մակարդակով պաշտոնական դիրքորոշում արտահայտել 1915 թ. կոտորածների վերաբերյալ: Առանց կասկածի տակ առնելու հայերի կոտորածի փաստը պատմականորեն, կառավարության կողմից դրա ճանաչման քաղաքական ակտը կարող է, մտադրությունները մի կողմ դրած, հնչել իբրեւ անուղղակի պաշտպանություն Հայաստանին՝ Ադրբեջանի հետ ունեցած իր հակամարտության հարցում, ինչը կհակասեր միջազգային հանրության ցուցումներին համաչափության եւ չեզոքության եւ հավասարակշռության քաղաքականությանը»:

Այս պատասխանը՝ պատմաբան Մարչելո Ֆլորեսը մեկնաբանել է հետեւյալ կերպ. «Դիվանագիտական նպատակահարմարությանը պատմական ճշմարտությունը ենթարկելը սակավ զգայունության դրսեւորում է ոչ միայն պատմության, այլեւ ճշմարտության հանդեպ: Դա բարոյական անկման արտահայտություն է, որը անցյալում հիշ չէ նպաստել, հանուն ցանկալի արդյունքների, պաշտպանության չդիմացող արարքների արդարացմանը»:

Այս տեսակետը ես լիովին ընդունում եմ եւ առաջարկում ձեր գնահատմանը: Ինձ անհավատալի են թվում ավելի քան ութսուն տարի առաջ Օսմանյան կայսրության ժամանակների պատմական ճշմարտությունը ճանաչել թույլ չտալու այս փորձերը: Եվրոպայում շատ են նրանք, ովքեր համարում են, որ Թուրքիայի կողմից այս պատասխանատվության ամբողջությամբ եւ լրիվ ստանձնումը պետք է լինի Թուրքիայից՝ Եվրամիությանն անդամակցության դիմումի քննարկմանն անցնելու առաջին եւ անհրաժեշտ պայմանը: Այս սկզբունքը պարզորոշ արտահայտված է Եվրամիության 18 հունիսի 1987 թ. որոշման մեջ, ուր ասվում է, որ անցյալում երիտթուրքերի կառավարության կողմից հայ ժողովրդի հանդեպ իրականացված ցեղասպանությունը ճանաչելու մերժումը ներկայիս թուրքական կառավարության կողմից անհաղթահարելի արգելք է Եվրամիությանը Թուրքիայի անդամակցելու ճանապարհին: Կարծում եմ, խոսքը բացարձակապես ընդունելի մի սկզբունքի մասին է, որը շատերն են որդեգրել:

Գործընկերներ, եթե մենք այստեղ՝ Մոնտեչիտորիոյում, քննարկենք եւ ընդունենք Հայոց ցեղասպանությունը ճանաչող մի փաստաթուղթ, այն կարող է «դոմինոյի ներգործություն» առաջացնել, ընդգրկելով Եվրամիության մյուս երկրները /Իսպանիան, Գերմանիան, Մեծ Բրիտանիան եւ այլն/: Այս խնդիրը չի կարող տարբեր մոտեցման արժանանալ ձախերի կամ աջերի կողմից: Խոսքը գաղափարախոսության կամ տնտեսական շահերի մասին չէ, այլ մարդու ազատության եւ արժանապատվության մասին, եւ, անկասկած արժե, որ այս հարցերում Եվրամիությունը համախմբված լինի եւ խոսի մեկ ընդհանուր ձայնով միայն: Բացի այդ, մենք օգնած կլինենք նաեւ չափավոր թուրքերին, քանի որ Անկարան այդ դեպքում այլ ելք չի ունենա, քան Եվրամիության կամքն ընդունելը: Տեղեկացնեմ ձեզ, որ Գերմանիայում մի Կոմիտե է կազմվել, որն իրենց կառավարությունից Հայոց ցեղասպանությունը ճանաչելու պահանջով 17 հազար թուրքերի ստորագրություն է հավաքել:

Պատմությունն ու ճշմարտությունը հնարավոր է մի կողմ դնել, կամ աշխատել սողել միշ թե շատ երկար ժամանակահատվածում, սակայն հնարավոր չէ ջնջել:

Խնդրում եմ ձեզ կոչել այդ լռությունը եւ բոլոր այն միջոցներով, որոնք նպատակահարմար կգտնեք, զգայունացնել Եվրամիության մյուս երկրների մեր գործընկերներին, որպեսզի սա առիթ դառնա նաեւ ինքներս մեզ ցույց տալու, որ Մաաստրիխտի Եվրոպայից վեր գոյություն ունի նաեւ քաղաքական Եվրոպա:

Իտալիայի խորհրդարանի Կամերայում սկսված Հայոց ցեղասպանության ճանաչման նախագծի քննարկումների ապրիլի 3-ի նիստի սղագրությունը

Որպես վավերագիր ստորեւ եւ հաջորդ մեր համարում հրապարակում ենք Իտալիայի խորհրդարանի փոքր պալատում սկսված Հայոց ցեղասպանության ճանաչման նախագծի քննարկումների ապրիլի 3-ի նիստի սղագրությունը, որը թարգմանաբար ստացել ենք ՀՀ ԱԳ նախարարության միջոցով: Ընթերցողներին հանձնարարում ենք ուշադրությամբ կարդալ ներկայացվող փաստաթուղթը, որն ի հակադրություն Ֆրանսիայի Սենատի եւ կառավարության պաշտոնական մերժման պատճառաբանություններին, բազմակողմանիորեն հիմնավորում է Հայոց ցեղասպանության ճանաչման անհրաժեշտությունը հենց Թուրքիայի շահերի եւ տարածաշրջանում լարվածության թուլացման տեսակետից:

միջազգային հանրությունը հանդես գա հանուն հայ ժողովրդի շահերի, ինչպես դա տեղի ունեցավ հրեաների Հոլոքոստի դեպքում»: Բացի այդ, Քաղաքային խորհրդի անդամները դիմել են իտալական կառավարությանը՝ Հայոց ցեղասպանությունը ճանաչելու կոչով:

Նախկինում նման փաստաթղթեր են ընդունել նաեւ Միլանի, Ֆլորենցիայի եւ շատ այլ մեծ եւ փոքր քաղաքների խորհուրդներ, Պադովայից մինչեւ Բանյակավալլո: Հայոց ցեղասպանությունը ճանաչած քաղաքների թիվն արդեն 33 է, վերջինը Բելլունոն էր՝ ուղիղ մեկ շաբաթ առաջ:

Մեր երկրի սահմաններից դուրս Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչվել է ՄԱԿ-ի մարդու իրավունքների ենթահանձնաժողովի, Եվրախորհրդի, շատ պետությունների եւ հասարակությունների կողմից: Վերջինս ըստ ժամանակագրության Շվեդիայի խորհրդարանն էր, որը պաշտոնապես ճանաչեց ցեղասպանությունը մի քանի օր առաջ՝ մարտի 29-ին:

Բոլոր նրանց թվարկումը, ովքեր պաշտոնապես ճանաչել են այս ցեղասպանությունը, շատ ժամանակ կխլի: Ես նախագահությանն եմ ներկայացրել այդ ցանկը եւ խնդրել եմ կցել այս քննարկման սղագրված տեքստին:

ՆԱԽԱԳԱՀ. Նախագահությունը համաձայն է:

ՋԱՆԿԱՐԼՈ ՊԱԼՅԱՐԻՆԻ. Իտալիայի խորհրդարանը, սակայն, դեռ դյուրազգացություն եւ համարձակություն չի ունեցել ճանաչելու այս ողբերգական պատմական ճշմարտությունը: Մինչ օրս այդ ցեղասպանության բնութագիրն է եղել լռությունը: Մարդասպանների լռությանը գումարվեց պետությունների, զոհերի, դիվանագիտության եւ մարդկային խղճի լռությունը: Քիչ թվով հայերի է հաջողվել խուսափել սպանդից, փախել են աշխարհի բոլոր հաղթակիրթ երկրները եւ անմիջապես սկսել են աշխատել:

Հարգել են իրենց հյուրընկալող երկրների օրենքները, ընտանիքներ են ստեղծել, չեն խոսել մահից ազատվելու համար հարկադրաբար թողած իրենց հողերի մասին: Եվ չեն խոսել իրենց մեռյալների մասին:

Սկզբից ընտրել են լռությունը՝ վերադարձելու համար, կարծես փորձել են մոռանալ՝ խաղաղություն գտնելու համար նոր կյանքում: Սակայն լքված տան հիշողությունը հավերժ է, եւ սպանված բարեկամներիդ ու ազգականներիդ հիշատակը հնարավոր չէ մոռանալ՝ կարող ես լռելյայն կրել այդ բեռը, բայց հիշողությունը փոխանցվում է հայրերից որդիներին, եւ ժամանակի ընթացքում մարդու խղճի լռությունը հետզհետե դառնում է անտանելի: Մենք եւ Եվրամիության մաս կազմող մյուս 14 երկրների խորհրդարանի անդամ մեր գործընկերները պարտավոր ենք ընդմիջել խղճի այդ լռությունը եւ մեր նպաստը բերել, որպեսզի Եվրամիության անդամ բոլոր երկրները հասարակամորեն ազդարարեն եւ հիշեն պատմական այդ ճշմարտությունը:

Ճանաչելով հայ ժողովրդի ցեղասպանությունը, Իտալիան եւ Եվրոպական պետությունները, որոնք աղասան են տվել սակավաթիվ վերադարձների, կճանաչեն նրանց ինքնությունը եւ վերջապես բարոյական հոգեհանգիստ կմատուցեն ցեղասպանության զոհերին:

Այսօր իմ պարտքն է փորձել խիստ հակիրճ ներկայացնել ձեզ փաստերը: Մեծարգո պատգամավորներ, խնդրում եմ հաշվի առնել հետեւյալ կետերը.

Հայերն ու թուրքերն ավելի քան ութ դար ապրել են կողք-կողքի փափկանկաս հավասարակշռության եւ փոխադարձ հանդուրժողականության պայմաններում: Օսմանյան կայսրությունը քրիստոնյա փոքրամասնություններին կրոնի եւ լեզվի ազատություն էր շնորհել: Սակայն Օսմանյան կայսրությունում բոլոր «անհավասները», այսինքն քրիստոնյաներն ու բոլոր ոչ մահմեդականները երկրորդ կարգի քաղաքացիներ էին համարվում. չէին կարող զենք կրել, չնչին իրավունքներ ունեին եւ հարկադրված էին հատուկ հարկեր վճարելու:

1914 թ. Օսմանյան կայսրությունը Ավստրիայի եւ Գերմանիայի կողքին պատերազմի մեջ մտավ: Հայերը, որ ապրում էին Օսմանյան կայսրության կովկասյան շրջաններում, հայտնվեցին երկու ճակատում: 1914 եւ 1915 թթ. թուրքական բանակը Կովկասում, Սարիղամիշի տակ, կործանարար պարտություն կրեց, եւ մեղքը բարդվեց հայերի վրա, որոնք մեղադրվեցին դավադրության մեջ:

1915 թ. փետրվարի 25-ին օսմանյան գլխավոր շտաբը հրաման արձակեց բոլոր հայ զինվորներին զինաթափելու:

1915 թ. ապրիլի 24-ի գիշերը Կոստանդնուպոլսում ապրող հայերը բանտարկվեցին: Կոտորածն սկսվել էր, եւ Արեւմուտքի պետությունները գիտեին այդ մասին:

1915 թ. մայիսի 27-ին մի օրենք ընդունվեց, որը լիազորում էր կասկածյալ անձանց բռնի տեղահանությունը: Այդ օրենքը լիազորություններ էր տալիս զինվորական հրամանատարներին՝ բռնի տեղահանել դավաճանության եւ լրտեսության մեջ կասկածվող քաղաքացիներին: Իրականում այդ օրենքը հավանություն էր տալիս կանխամտածված եւ նպատակաուղղված մի ողջ ժողովրդի զանգվածային տեղահանություններին եւ սպանություններին: Բազմաթիվ վկայություններ կան հաստատող, որ գործ ունենք սիստեմատիկ եւ կազմակերպված ոչնչացման մի գործընթացի հետ:

Եթե չէին էլ սպանում, հայերին շարքերով, հետիոտն, բռնի քշում էին դեպի Սիրիա, Դեր էլ Զորի անապատը: Այնքան էին սիրում քայլել, մինչեւ բոլորը մեռնեն:

Այս է, դժբախտաբար, պատմությունը: Ահա ոչ վաղ անցյալի թվերը, որոնք պետք է իմանալ: Դարասկզբին Թուրքիայում ապրում էր 1.800.000 հայ: Մոտ 700.000-ը սպանվեցին իրենց բնակության վայրերում եւ մոտ 600.000-ը մահացան բռնագաղթի ժամանակ: 200.000-ն էլ փախան Կովկաս: 150.000-ը կարողացան փախչել Եվրոպա: Թուրքիայում վերադարձ 150.000-ից պակաս հայ: Անատոլիայում 3000 տարի ապրող հայության 70 տոկոսից ավելին ոչնչացված էր:

Սրանք են Հայոց ցեղասպանության հաշվեկշիռը ներկայացնող թվերը: Ոչ շատ տարիներ առաջ է պատահել՝ դարասկզբին: Նացիստները դեռ իշխանության չէին եկել, եւ բազմաթիվ հրեաներ դեռ խաղաղ ապրում էին Գերմանիայում եւ Իտալիայում: Հիտլերը, 1932 թ. օգոստոսի 22-ին, Լեհաստան մտնելուց առաջ, Օբերզալցբերգում մի ժողովի ժամանակ հայտարարել է.

«Ո՞վ է այդ օրից հետո խոսում այսօր հայերի ոչնչացման մասին»:

Մարդկության պատմության այս սեւ էջին վերաբերող վկայություններն շատ շատ են: Գերմանացի Արմին Վեգների ողբերգական լուսանկարներից բացի բազմաթիվ փաստաթղթեր գոյություն ունեն, որոնցից մեջբերեմ միայն երեքը. «Բռնագաղթի կատարման ձեւն առաջացնում է, որ կառավարությունը իրապես հետաքրքրվում է Օսմանյան կայսրությունում հայկական ցեղի ոչնչացման նպատակ»:

Սա Թուրքիայում Գերմանիայի դեսպան Հանս Ֆոն Վանգենհայմի 1915 թ. հուլիսի 7-ի նամակից է:

«Գաղտնիք չէ, որ նախատեսված ծրագիրը պարունակում է հայոց, իբրեւ ցեղի, ոչնչացումը»:

Սա Անատոլիայում ԱՄՆ հյուպատոս Լեսլի Դեյիսի վկայությունն է՝ գրված 24 հուլիսի 1915 թ.»:

«Մեզ մեղադրում են մեղավոր եւ անմեղ հայերի միջեւ տարբերություն չդնելու մեջ. դա բացարձակապես անհնար է, քանի որ այսօրվա անմեղները գուցե վաղվա մեղավորներն են դառնալու»:

Այսպիսի հրաման է տալիս ներքին գործերի նախարար Թալեաթ փաշան 1915 թ.:

Ինձ հայտնի է, որ 1919 թ., Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո, երբ ընկնում է երիտթուրքերի կառավարությունը, Թուրքիայի նոր կառավարության զինվորական դատարանը մահվան է դատապարտում ցեղասպանության երեք գլխավոր պատասխանատուներին: 1919 թ. դատարանի մեղադրանքն էր կոտորածը եւ ոչ ցեղասպանությունը: Հետագայում Թուրքիայի պետությունը միշտ ժխտել է ցեղասպանություն իրագործելու փաստը: Պաշտոնական վարկածն այն է, որ բռնի տեղահանումները հրահանգվել են ապստամբությունը զսպելու նպատակով: Դժվար է այս թեզն ընդունել նաեւ այն պատճառով, որ բռնագաղթը կատարվել է դեպի Սիրիա՝ Դեր էլ Զորի անապատ, ուր էլերն են տեղ հասել եւ ուր անհնաս է կարծել, որ մարդ արարածը կկարողանար վերապրել առանց ջրի եւ առանց սննդի՝ բուսականությունից զուրկ լեռ անապատում:

Եվրախորհրդարանը հաստատում է, որ Թուրքիայի պետությունը, հրաժարվելով ճանաչել 1915 թ. ցեղասպանությունը, մինչ օրս զրկել է եւ շարունակում է զրկել հայ ժողովրդին սեփական պատմության իրավունքից:

Ձեզ պետք է տեղեկացնեմ նաեւ մեկ այլ բան: 1998 թ. մայիսի 29-ին Ֆրանսիայի Ազգային ժողովի մեր գործընկերները միաձայն օրենք են ընդունել Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչելու մասին: Դա մարդասիրական եւ քաղաքացիական խիզախության արտակարգ դրսեւորում է Ֆրանսիական խորհրդարանի կողմից: Անկարայի կառավարությունը շատ կոշտ արձագանքեց դրան՝ սպառնալով Փարիզի դեմ առեւտրական սանկցիաներ կիրառել: Այսպես ուրեմն, գործընկերներ, համարյա երկու տարի է անցել, սակայն այդ օրենքը մինչ օրս չի քննարկվել Ֆրանսիայի Հանրապետության Սենատում, եւ այսօր առավոտյան տեսա, որ պատգամավորներին, Կամերայի բոլոր անդամներին էլեկտրոնային փոստով նամակներ են ուղարկվել, որոնցում ասվում է, որ Ֆրանսիական Սենատը, ի տարբերություն Ազգային ժողովի, հրաժարվել է քննարկել այս նյութը՝ պատճառաբանությամբ, որ սահմանադրությամբ Սենատին նման բան արտոնված չէ:

Ահա մի քաղվածք այդ օրերի տեղեկատվություններից.

29 մայիսի, Թուրքիայի ԱԳ նախարար Իսմայիլ Ջեմ. «Դատապարտում եմ այդ որոշման ընդունումը, որը Թուրքիայի եւ Ֆրանսիայի միջեւ հարաբերությունների վրա բացարձակ ազդեցություն կունենա»:

30 մայիսի. «Թուրքիան վերանայում է իր հարաբերությունները Ֆրանսիայի հետ եւ պատժամիջոցներ է պատրաստում Փարիզի դեմ /.../ սպառնալով դիմել այնպիսի հակադարձ քայլերի, ինչպիսին է Ֆրանսիայի ընդգրկումը «կարմիր ցուցակում»՝ բոլոր այն երկրների ցանկում, որոնց հետ բացառվում է առեւտուրը ռազմական բնագավառում»:

2 հունիսի. «Թուրքիայի խորհրդարանն այսօր դատապարտեց Ֆրանսիական խորհրդարանին...»:

5 հունիսի. «Ֆրանսիայի Ազգային ժողովի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչելու հետեւանքով խափանվեց Ֆրանսիական Aerospatiale-ի եւ թուրքական արդյունաբերության միջեւ Eryx հրթիռների արտադրության վերաբերյալ 2,7 միլիարդ ֆրանկ արժողությամբ պայմանագրի ստորագրումը»:

Այս հակազդեցության դրդապատճառները կարող են բազմաթիվ լինել: Մեկը եւ ոչ երկրորդականն, այն է, որ սկսելով Հայոց ցեղասպանության ճանաչումով, միջազգային հանրային կարծիքը կարող էր ճանապարհ ընկնել, հասնելով մինչեւ մեր օրերը եւ Քրդստանում խաղաղություն հաստատելու անհրաժեշտության գաղափարին:

Կարծում եմ, իմ պարտքն էր անել այս մեջբերումները, հաղորդել ձեզ այն ամենը, ինչ ես գիտեմ, որպեսզի դուք կարողանաք լիիրավ գիտակցությամբ քվեարկել: Հայոց ցեղասպանությունը ճանաչած քաղաքների շարքում է նաեւ Իմոլան, եւ ես այստեղ 1998 թ. մայիսի 18-ի մի տեղեկություն ունեմ, ուր գրված է. «Թուրքիան, սակայն, չի սահմանափակվում բողոքելով եւ պահանջում է այն, ինչը Իմոլայում համարում են խորհրդի բոլոր անդամների, սկսած նախագահից, «ցուցակավորում»՝ քանիսն են, ինչ քաղաքական խմբերի են պատկանում եւ այլն»:

Կարող եմ բազմաթիվ նման այլ դեպքեր բերել, ընդհուպ անցյալ երեքշաբթի՝ մարտի 28-ի «Լա Սամպա» օրաթերթը, ուր կարելի է կարդալ. «Մի քանի շաբաթ առաջ Հռոմի Քաղաքային խորհուրդը քվեարկել է 1915 թ. թուրքերի կողմից իրագործված Հայոց ցեղասպանության ճանաչման օգտին: Նախաձեռնողները չէին թաքցնում իրենց մտադրությունը՝ նույնը կրկնել ն

ԱԶԳ

Մշակույթ

Զարմանալի ժողովուրդ դարձանք էս վերջին 3-4 տարում. դեռեկտիվ պատմություններ հորինող եւ մեկս մյուսիս համոզող: Եվ այնպես հավակնոտ ինքնավստահությամբ ենք խոսում, այնպիսի համառությամբ ենք պնդում մեր ասածը, որ չհավատացողը պարզապես անհավատ դառնում մեզ համար: Քաղաքական բոլոր գործիչներին ննջել-դաստել-կախել ենք: Իսկ ինչո՞վ են պակաս արվեստի աշխարհի մարդիկ, մշակութային գործիչները, մտավորականները, նրանք ինչո՞ւ դուրս մնան այս համատարած կասկածանքի մթնոլորտից: Սամուլի որոշ օրգաններ վերջերս կասկածանքի թիրախ են դարձրել Խորեն Աբրահամյանին: «Հավատի աղբյուրներից» տեղեկություններ հավաքելով, շրջանառության մեջ մտավ իր անհեթեթությամբ զավեշտական մի լուր. «Խորեն Աբրահամյանը վաճառել է երեւանյան իր տունը, կնոջ՝ Գոհար Գալստյանի եւ որդու՝ Արամի հետ անվերադարձ գնացել Հայաստանից»: Լավ է, չէ՞: Նույնիսկ մեր սենսացիոն ժամանակներում սենսացիոն է, առավել եւս, որ այս «լուրին» կարելի է մանրամասներ ավելացնել: «Հավատի աղբյուրներին» չվստահելով փորձեցինք ինչ-որ բաներ պարզել... իրենից՝ Խորեն Աբրահամյանից:

Զանգահարեցինք Խորեն Աբրահամյանի երեւանյան հեռախոսահամարով, պայմանավորվեցինք այստեղ՝ Երեւանում: Եվ ապրիլի 6-ին հյուր եղանք Խորեն Աբրահամյանին: Հասկանալի է, որ մեր զրույցն սկսվեց հենց «անվերադարձ փախուստի» հարցը ննջելով:

- Եթե այդ խոսակցությունները, բամբասանքները ցավալի եւ նեռազդող երեւույթ չլինեին, ես կուրախանայի, ասաց Խորեն Աբրահամյանը: Հավանաբար ինչ-որ վստանգ են տեսնում իմ գոյությունից եւ բռնում հանդես գալուց, որովհետեւ (կարծում եմ՝ ինձ հետ կհամաձայնվեք) ես երբեք հենց այնպես չեմ խաղացել, հենց այնպես բեմադրություն չեմ արել: Երեւի ավելորդ գլխացավանք եմ դարձել որոշ մարդկանց համար: Տեսեք, թե հիմա ինչ է կատարվում. կարելի է սովորական, ոչինչ չասող ներկայացումներ դնել, շոուներ, ամեն տեսակ մայմունություններ անել: Բայց, Աստված չանի, որ ինչ-որ մեկը լուրջ գործ անի, այնպիսի գործ, որ մարդկանց ուղեղի ծալքերը շարժվեն: Թող սա ավելորդ ինքնավստահություն, ավելին՝ գոռոզամտություն չթվա, բայց ինձ թվում է, որ իմ մի շարք արվեստակից «ընկերների», «բարեկամների», անգամ ղեկավարների անհանգստացնում է իմ մնալը, ոչ թե գնալը:

Իսկ որ Խորեն Աբրահամյանը ստեղծագործական անընդհատ երթի մեջ է, հաստատվում է նաեւ այսօր: Անցած տարվա նոյեմբերին Երեւանում չորս, այնուհետեւ մեկ անգամ Գյումրիում ներկայացվեց Ռ. Քոքերնի «Չին» խաղը» պիեսը, կամերային մի ստեղծագործություն, որի մասնակիցները երկուսն են՝ ծերանոցում գտնվող կինն ու տղամարդը: Բախտի դաժան քմահաճույքով հարազատներից լքված երկու մարդ հոգեւոր աջակցություն են գտնում միմյանցով: Նրանք մտերմանում, ապա նաեւ սիրահարվում են, գտնում կյանքի իմաստն այն ժամանակ, երբ թվում է, թե ամեն ինչ անցյալ է այլեւս, թե ոչինչ սկսել հնարավոր չէ: Որքան համոզիչ է Խորեն Աբրահամյանի Մարտին Ուոլերը, նույնքան հավատալի է Գոհար Գալստյանի Ֆենչի Դորսին: Թվում է, թե այս ներկայացումը ոչինչ չունի մեր այսօրվա հայ իրականության հետ եւ հազիվ թե այսօրվա հոգեկան թշվառություններով ապրող հայ մարդուն հետաքրքրեին մենավորության կապանքներից ազատագրվել ցանկացող երկու ծեր ամերիկացիների գրեթե խելահեղ ջանքերը: Սակայն եւ Երեւանի, եւ Գյումրիի ներկայացումները ցույց տվեցին, որ մեծ, ճշմարիտ արվեստի նկատմամբ ունեցած մեր սերը չի մարել: Ներկայացումը Հայկական բարեգործական ընդհանուր միության հովանավորությամբ հասավ նաեւ ԱՄՆ Փասադենա եւ Փարիզ: Կրկին ու կրկին հավաստվեց այն պարզ ճշմարտությունը, որ սիրո հավերժական թեման անմահ է, առանձին եւս, որ ներկայացվում է վարպետների կողմից:

Երեք՝ Երեւանում. չհաշված նաեւ տունն ու տունը

- Ես դժվարությամբ կարողացա համոզել Գոհարին այս ներկայացմանը մասնակցելու համար, ասում է Խորեն Աբրահամյանը: Ինքս էլ երկար եմ մտածել այս պիեսի մասին: Այն մեր ծեռին էր դեռ Սունդուկյանի թատրոնում մեր աշխատած տարիներին: Որոշել էի ինքս բեմադրել, միայն բեմադրել՝ ուրիշներին առաջարկելով հերոսների դերը: Բայց հազար ու մի պատճառ եղավ, որ-պեսզի ցանկությունս չիրականանար: Եվ ահա հիմա, երբ ավելի շատ ժամանակ ունեի զուտ ստեղծագործական աշխատանքի մասին մտածելու, կրկին հանեցի «Չին» խաղը»: Փասադենայի, Փարիզի սրահներում ներկայացված բեմադրությունը, առավել եւս մեր երեւանյան եւ Գյումրիի ելույթները աղացուցեցին, որ հանիրավի վաղ ենք մահախոսական կարդացել մեր թատրոնի համար: Ինձ հատկապես աղշեցրեց մեր այցը Գյումրի: Կենցաղային հոգսերի տակ ճկած գյումրեցիներից շատերն ի վիճակի չէին տոմս գնել, դահլիճ մտնել: Սակայն հավաքվել էին թատրոնի մոտ: Դա ինձ անչափ հուզեց, եւ ես խնդրեցի թատրոնի ղեկավարությանը ներս թողնել բոլոր նրանց, ովքեր ցանկանում են դիտել ներկայացումը: Ես անչափ շնորհակալ եմ գյումրեցիներից այսպիսի ուշադրության համար: Եվ այդ օրը շատ ավելի ոգեւորված խաղացինք:

- Անչափ բարդ այս բեմադրությունում Դուք կարողանո՞ւմ էիք տանել Խորեն Աբրահամյանի վարպետությունը:

Տիկին Գոհարին ուղղված հարցիս պատասխանում է Խորեն Աբրահամյանը:

- Գուցե ուրիշների համար զարմանալի թվա, բայց ինձ համար բնական է, որ Գոհարի վարպետ խաղն ամբողջ ներկայացման ժամանակ ինձ լարվածության մեջ էր պահում, թույլ չէր տալիս հենց այնպես, իմիջիայլոց խաղալ: Անչափ շնորհակալ եմ Գոհարից, թեեւ հազիվ կարողացա նրան համոզել Ֆենչի Դորսիի կերպարը մարմնավորելու...

...Խորեն Աբրահամյանին եւ Գոհար Գալստյանին հյուրընկալվեցի ապրիլի 6-ին, այսինքն այն ժամանակ, երբ նրանց «անվերադարձ հեռանալու» մասին խոսակցություններն այնքան համոզիչ էին հնչեցվում, որ մանրամասներ էին նշվում վաճառված տան գնի, տարած ու թողած ինչքի, ԱՄՆ-ում ձեռք բերած տան մասին: Բայց ամուսինները Երեւանում էին եւ բնավ էլ մտադիր չեն հեռանալու Հայաստանից: Ավելին: Խորեն Աբրահամյանը ոգեւորված խոսում է նոր ծրագրի մասին: Արմեն Վաթյանը նոր նախագիծ է ներկայացրել, որ պայմանականորեն կարելի է կոչել «Առաջին սիրո երգ-2»: Մեր հանդիսատեսն անշուշտ լավ է հիշում Խորեն Աբրահամյանի առաջին խոշոր դերը հայկական կինոյում, որը նրան մեծ ճանաչում բերեց: Եվ ահա այժմ պատրաստվում են նկարահանել (կամ բեմադրել) այս կինոնկարի նոր տարբերակը, ըստ որի երգիչ Արսեն Վարունցն արդեն հասուն տարիքի մարդ է, իր որդին է այժմ արվեստի դժվար ճանապարհը բռնել...

- Չգիտեմ՝ ինչ կստացվի այս մտահղացումից, ասում է Խորեն Աբրահամյանը, բայց շատ կուզենայի այն իրականացած տեսնել, քանի «Առաջին սիրո երգը» եւ Արսեն Վարունցն ինձ համար շատ թանկ են...

Այնուհետեւ ամուսինների հետ զրուցեցինք նրանց այգում, լուսանկարեցի նրանց, նաեւ որդուն՝ Արամին... Չէ, Խորեն Աբրահամյանը ոչ մի տեղ գնալու մտադրություն անգամ չունի, իր տունը չի վաճառել, տան մեջ եղած-չեղածը չի վաճառել, իր երկու շներին էլ ուրիշներին չի տվել պահելու: Նա մնալու է Հայաստանում, մնալու է, թեեւ մենք շնորհավորեցինք նրան ծննդյան օրվա առիթով (ապրիլի 1-ին արվեստագետը դարձավ 70 տարեկան): Քեն չի պահել, որովհետեւ լավ գիտե՝ աշխարհը հարստանում, գեղեցկանում է միայն սիրով՝ եւ ներողամտությամբ, այլ ոչ թե չարությամբ ու քենով:

ՍԵՐԳԵՅ ԳԱԼՈՅԱՆ

«Ինչ որ վտանգ են տեսնում, եթե այստեղ եմ»

Խորեն Աբրահամյանը չի հեռացել Հայաստանից

ԿԱՄՈՒՐՋ

«Համայնապատկեր» հանդեսը Լոս Անջելեսում

Ուղիղ մեկ տարի առաջ՝ 1999-ի ապրիլին Լոս Անջելեսում սկսեց լույս տեսնել գրական-մշակութային «Համայնապատկեր» հանդեսը, որի գլխավոր խմբագիրը Սարո Գյոդակյանն է: «Կարոս» հրատարակչատանը տպագրվող «Համայնապատկերն» առաջին իսկ համարներից սկսած դարձել է ամերիկաբնակ հայերի սիրելի հանդեսը: Եվ դա բնավ պատահական չէ: Գլխավոր խմբագիրը կարողանում է իր հանդեսում համադրել եւ հայրենաբնակ, եւ սփյուռքում ապրող հայերի ցանկությունները: Հանդեսի այցեստվսում, որը տպագրվում է ամեն համարում, խոսվում է այս հրատարակության նպատակների մասին. «Ազգությունը՝ հայ, գիտակցում է՝ բռունցքվելն է հավերժությունը Հայաստանի, մերժում է միջակությունը, ընդունում է բացարձակը, այնպես է ուզում մուտք գործել յուրաքանչյուր հայի օջախ...»: Այցեստվսում նշված նպատակները Սարո Գյոդակյանի ղեկավարած խմբագրակազմը կատարում է պարկեշտորեն, եւ հանդեսը դարձել է փնտրված ոչ միայն ԱՄՆ-ում:

Մեր բարեկամին եւ նրա ղեկավարած խմբագրակազմին ցանկանանք հաջողություններ, քանզի այս հանդեսն անչափ կարեւոր կամուրջ կարող է դառնալ հայրենիքի եւ սփյուռքի միջեւ:

Ս. Գ.

Երաժշտությունը սահմանագիծ չունի

Նախորդ շաբաթ Երեւանում մենահամերգներով հանդես եկավ վրաց դաշնակահարուհի Պելոգեա Մաչաբելին: Նա 21 տարեկան է, սովորում է Թբիլիսիի պետական կոնսերվատորիայի երկրորդ կուրսում: Պրոֆեսոր Իրետ Ռուսիշվիլու ուսանողուհին է, միջազգային երաժշտական բազմաթիվ մրցույթների դափնեկիր, 16 տարեկանում արժանացել է Աթենքի միջազգային մրցույթի Գրան պրի մրցանակի: **«Ազգին»** Պելոգեա Մաչաբելին հարցազրույց տվեց մեկնելուց առաջ:

Պելոգեա Մաչաբելին զարմացած էր մեր մայրաքաղաքի գիշերային աշխուժությամբ: Օրինակ, Թբիլիսիում, ի տարբերություն մեզ, գիշերն ավելի սակավամարդ է: Վրացուհին, առաջին անգամ լինելով Հայաստանում, հիացած է հայերով, Երեւանով ու հանդիսատեսի ջերմությամբ:

- Ես՝ ինչպես ցանկացած երաժիշտ, ինքնաբնադատաբար եմ մոտենում իմ կատարումներին, քանզի երաժշտությունը սահմանագիծ չունի եւ յուրաքանչյուր երաժիշտ փորձում է ամեն անգամ առավել բարձր բարձունքներ նվաճել: Ես զգացված ու ցնցված եմ հայ հանդիսատեսից, թե որքան զգայուն էին նրանք իմ երաժշտության նկատմամբ:

- Առաջիկայում ի՞նչ ծրագրեր ու համերգներ ունեք եւ ե՞րբ նորից կայցելեք Հայաստան:

- Դժվարանում եմ պատասխանել, քանի որ կոնկրետ ծրագրեր չունեմ: Մոտ ապագայում պատրաստվում եմ մեկնել Վրաստանից, քանի որ մեզ մոտ երիտասարդ արվեստագետների համար հեռանկար չկա: Միջոցների բացակայության պատճառով համերգներ գրեթե չեն լինում: Հովանավորներ չկան, մշակույթը գործարարների ուշադրության կենտրոնում չէ:

Պելոգեա Մաչաբելին մեզ պատմեց, որ արտագաղթի խնդիր կա նաեւ Վրաստանում: Այնտեղ նույնպես հատկապես տաղանդավոր երիտասարդները մեկնում են արտերկիր, ուր, վրաց դաշնակահարուհու խոսքերով, «ջերմորեն են ընդունում, գնահատվում են անհրաժեշտ ամեն ինչով եւ գնահատում են տաղանդը»:

Հարցազրույցի վարիչ Պելոգեա Մաչաբելին նոր հազարամյակին ընդառաջ մեր երկու երկրներին մաղթեց այնպիսի ղեկավարներ, որոնք կկարողանան թեկուզ մի փոքր թեթեւացնել ժողովրդի վիճակը:

Զրույցը վարեց
ԱՐՏԱԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԸ

Ալբոմը վաճառվել է 17 մլն օրինակով

Շնայա Թուեյնին հաջողվել է գերազանցել Մադոնային, Ալանիս Մորիսեթին եւ մյուս բոլոր մեծանուն աստղերին: Հաշվի առնելով, որ միայն Միացյալ Նահանգներում նրա "Come on over" ալբոմը վաճառվել է 17 միլիոն օրինակով՝ կարող ենք ասել, որ այդ ալբոմը դարձել է ռեկորդակիր. այլ երգչուհիների ծայնագրած որեւէ ալբոմ նման հաջողության չէր հասել: Ի դեպ, երգչուհու ամուսնու՝ Ռոբերտ «Մաթ» Լենգի պրոդյուսերությամբ 123 շաբաթ առաջ թողարկված "Come on over" ալբոմի համաշխարհային վաճառքը գերազանցել է 26 միլիոն նմուշը:

Բոլոր ժամանակների լավագույնս վաճառված ալբոմների ցուցակում վերոհիշյալը գրավում է 5-րդ տեղը, իսկ նրանից վերեւ տեղ են զբաղեցրել Ֆլիթվուդ Մեքի "Rumours", Լեդ Զեփելինի "IV", Մայքլ Ջեքսոնի "Thriller" եւ Իգլզի "Greatest hits" ալբոմները:

ԱՐԹՈՒՐ ՕՍԻՊՅԱՆ
ՋԱՐԻՆԵ ՍԱՖԱՐՅԱՆ

ՕՐՎԱ ՏՈՊԱ

Ապրիլի 11

- 1865 թ. ծնվել է բանաստեղծ Ալեքսանդր Ծատուրյանը, որի խորհրդածությունների եւ սիրո առարկան հայրենիքն էր: Ծատուրյանը միաժամանակ թարգմանիչ էր, մի շարք ճնարական բանաստեղծությունների հեղինակ:
- 421 (Ք.ծ.ա.) աթենացիների եւ սպարտացիների միջեւ կնքվեց խաղաղության՝ նիկյան 50-ամյա համաձայնագիրը: Բայց ութ տարի անց, կրկին սկսվեց եղբայրասպան պատերազմը՝ Հունաստանը գավթելու նպատակով:
- 1492 թ. ծնվել է ֆրանսիացի գրող Մարգարիտ Նավարացին, որը Ֆրանցիսկ թագավորի քույրն էր, Նավարայի թագուհին:
- 1779 թ. ծնվել է ռուս բանաստեղծ եւ թարգմանիչ Իվան Կոզլովը, որը միաժամանակ խստաբարո զինվորական էր:
- 1945 թ. Բուխենվալդի գերիներն ապստամբություն բարձրացրին, ջարդուփշուր արեցին համակենտրոնացման ճամբարը, եւ հազարավոր գերիներ փրկվեցին տառապանքի եւ մահվան ճիրաններից:
- Այսօրը հին հայկական տոմարով Ահեկան ամսվա երեզկան օրն է:

ՆԱՐԻԿ ԹԱՊԵՏՅԱՆ

ԱՌԱ

Մարզական

ՖՈՒՏԲՈԼ

1/4 եզրափակիչի առաջին խաղերը

Անցկացվեցին ՀՀ «Անկախության» գավաթի խաղարկության քառորդ եզրափակիչ փուլի առաջին հանդիպումները, ավելի ճիշտ՝ նախատեսված չորսից երեքը:

«Շիրակ» (Գյումրի)-«Կիլիկիա» (Երեւան)՝ 1-1: Երիտասարդական կազմ ունեցող «Կիլիկիան», որը բավականին լավ ֆուտբոլ է ցուցադրում, հաճելի անակնկալ մատուցեց իր երկրպագուներին՝ ոչ-ոքի խաղալով երկրի չեմպիոնի հետ: Առաջին խաղակեսն անցավ «Շիրակի» առավելությամբ, եւ 35-րդ րոպեին Արթուր Պետրոսյանը գրավեց հյուրերի դարպասը: Երկրորդ խաղակեսում պատկերը մի փոքր այլ էր. «Կիլիկիան» ակտիվացրեց իր գործողությունները՝ աղավինելով սուր հակագրոհներին, եւ խաղը վերսկսելուց 5 րոպե անց Արտավազդ Քարամյանը խփեց պատասխան գնդակը:

Մյուս երկու խաղերում ավելի փորձառու «Արարատն» ու «Զվարթնոցը» զգալի առավելություն ունեին բարձրագույն խմբի նորեկ թիմերի նկատմամբ եւ խոշոր հաշվով հաղթանակներ տարան:

«Լեռնագործ» (Կապան)-«Արարատ» (Երեւան)՝ 0-4: Հյուրերը բոլոր առումներով գերազանցեցին դաշտի տերերին՝ նրանց դարպասը 4 անպատասխան գնդակ խփելով: Առաջին խաղակեսում աչքի ընկան Վարազդատ Ավետիսյանն ու Արա Ադամյանը, իսկ երկրորդ կեսի հենց սկզբում ընդամենը 5 րոպեի ընթացքում Տիգրան Եսայանը 2 գոլ խփեց (առաջինը՝ 11 մ տուգանային հարվածով):

«Զվարթնոց» (Երեւան)-«Դինամո» (Երեւան)՝ 3-0: Դաշտի տերերը հենց սկզբից տիրեցին նախաձեռնությանը: Նրանք մի շարք վսանգավոր պահեր ստեղծեցին դինամոյականների դարպասին, իսկ իրենց առավելությունը գոլերի վերածեցին առաջին խաղակեսի վերջնամասում: Ընդամենը երկու րոպեի ընթացքում Նվեր Խաչատրյանը եւ Մկրտիչ Հովհաննիսյանը երկու անգամ հյուրերին ստիպեցին գնդակը հանել սեփական դարպասից: Հանդիպման երկրորդ կեսի երկրորդ րոպեին Վահրամ Լոբյանը խփեց 3-րդ եւ վերջին գոլը:

Այս երեք զույգերը քառորդ եզրափակիչի պատասխան խաղերը կանցկացնեն ապրիլի 18-ին: Նույն օրը առաջին անգամ կմրցեն «Միկա» (Երեւան) եւ «Արաֆ» (Արարատ) թիմերը (նրանց պատասխան խաղը կկայանա ապրիլի 22-ին):

Մարտական ոչ-ոքի

Գավաթի խաղարկության «Միկա»-«Արաֆ» հանդիպումը հետաձգվել էր, քանի որ Արարատի թիմը մեկնել էր Քուբայիս՝ տեղի «Տորպեդո» ակումբի հրավերով: Վրաստանի առաջնության առաջատարի եւ Հայաստանի առաջնության երրորդ մրցանակակրի ու գավաթակրի միջեւ անցկացվեց ընկերական հանդիպում, որը նվիրված էր Քուբայիսի կենտրոնական մարզադաշտի վերակառուցմանը: Խաղն ընթացավ տոնական մթնոլորտում. ամեն ինչ տրամադրող էր՝ գարնանային եղանակը, բարմացած, գեղեցկացած մարզադաշտը, տրիբունաներում գտնվող 23 հազար մարզասերների եռանդուն «ցավաբուրյունը»... Խաղն էլ շատ դիտարժան ստացվեց, թեեւ, չնայած կողմերի գործադրած ջանքերին, ավարտվեց 0-0 հաշվով:

ՀՀ ֆուտբոլի ֆեդերացիայի մամուլի ծառայության ղեկավար Սուրեն Բաղդասարյանի հավաստմամբ, «Արաֆը» շատ լավ տրամադրություն է թողել մասնագետների վրա: Մասնավորապես, մեր թիմի հաստեղծ գովեստի խոսքեր է ասել «Տորպեդոյի» գլխավոր մարզիչ, հանրահայտ Դավիթ Ղիփիանին: Նա ավելացրել է, որ Վրաստանի չեմպիոնի կոչման համար պայքարող իր թիմի համար շատ օգտակար էր «Արաֆի» հետ անցկացրած հանդիպումը:

Գոլառատ հանդիպումներ

Չեմպիոնների լիգայում քառորդ եզրափակիչ առաջին խաղերն անցկացրին նաեւ «Չելսի» (Անգլիա)-«Բարսելոն» (Իսպանիա) եւ «Վալենսիա» (Իսպանիա)-«Լացիո» (Իտալիա) զույգերը: Ի տարբերություն նախորդ օրը կայացած «Ռեալ»-«Մանչեսթր յունայթեդ» եւ «Պորտո»-«Բավարիա» խաղերի, այս հանդիպումները գոլառատ էին: Բացի այդ, ինչ-որ չափով անսպասելի ավարտ ունեցան՝ ֆավորիտներ համարվող «Բարսելոնն» ու «Լացիոն» լուրջ պարտություններ կրեցին:

Լոնդոնում կայացած խաղի առաջին կեսում «Չելսին» լիիրավ տնօրինում էր հանդիպման ընթացքը: Ջանֆրանկո Չոլան (30) եւ Տուրե-Անդրե Ֆլոն (34 եւ 38) 3 անգամ գրավեցին «Բարսելոնի» դարպասը: Երկրորդ խաղակեսում հավասար խաղ ընթացավ, եւ իսպանացիների ավագ Լուիս Ֆիգուն (64) կրճատեց խաղի հաշվի տարբերությունը՝ 3-1:

«Վալենսիան» խոշոր՝ 5-2 հաշվով հաղթեց «Լացիոյին»: Այստեղ իտալացիների դարպասը 3 գոլ խփեց Ժերարդ Լոպեսը, մեկական անգամ աչքի ընկան Միգել Անգուլոն եւ Կլաուդիո Լոպեսը: «Լացիոյի» գոլերն իրենց հաշվին գրանցեցին Սիմոնե Ինզագին եւ Մարսելո Սալասը:

Իհարկե, ապրիլի 18-ին կայանալիք պատասխան խաղերում «Բարսելոնի» եւ «Լացիոյի» համար չափազանց դժվար կլինի հաղթել 2 եւ 3 գնդակի տարբերությամբ:

Դաշտի տերերը հաղթում են

ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկության կիսաեզրափակիչ փուլի «Գալաթասարայ»-«Լիոն» հանդիպմանը ողբերգական իրադարձություններ նախորդեցին: Ստամբուլի կենտրոնական փողոցներում ընդհարվեցին թուրք եւ անգլիացի ֆանատները, որի արդյունքում անգլիացիներից երկուսը սպանվեցին, իսկ մի քանիսը ծանր վնասվածքներով տեղափոխվեցին հիվանդանոց: Այդ իսկ պատճառով հաջորդ օրը խաղի անցկացումը հարցականի տակ էր:

Ի վերջո հանդիպումը կայացավ: «Գալաթասարայը», որը շատերի համար անսպասելիորեն հաջող է հանդես գալիս խաղարկությունում, այս անգամ էլ հաղթանակի հասավ: Խաղասկզբում Հական Շուկուրը բացեց խաղի հաշիվը, իսկ առաջին խաղակեսի վերջում բրազիլացի Կաֆոնեն այն դարձրեց 2-0:

«Արսենալ»-«Լանս» խաղում նվազագույն հաշիվ գրանցվեց՝ 1-0: Երկու րոպե էլ չէր անցել, երբ Դենիս Բերգկամպը, ստանալով խաղընկերոջ երկար փոխանցումը, գրավեց ֆրանսիացիների դարպասը: Հետագայում անգլիացիները հաշիվն ավելացնելու բազմաթիվ հնարավորություններ ունեցան, բայց հիանալի խաղաց հյուրերի դարպասապահ Վարմյուզը:

ՏՈՆ

Վազքարավ՝ նվիրված տոնին

Ապրիլի 7-ը՝ գեղեցկության ու մայրության տոնը յուրովի նշեցին մեր հանրապետության մարզական կազմակերպությունները: Տոնական երկու միջոցառման մասին՝ ստորեւ:

Հանրապետության սպորտի վետերանների միությունը, որը վերջին շրջանում ակտիվացրել է իր գործունեությունը, հետաքրքիր վազքարավ էր կազմակերպել՝ հրավիրելով շատերին: Գեղեցիկ սեռի ներկայացուցիչներին որոշել էին մենակ չթողնել երեւանի վազքասերների ակումբի տղամարդիկ, այնպես որ՝ Հանրապետության հրապարակից մեկնարկած խումբը բավականին բազմամարդ էր՝ ավելի քան 40 հոգի: Վազքարավի մասնակիցները համերաշխորեն անցան մայրաքաղաքի փողոցներով եւ ուղղվեցին «Հրազդան» մարզադաշտ: Միայն այստեղ վազքուղյակներում մի խումբ աղջիկներ պոկվեցին մյուսներից, որպեսզի ավելի շուտ ավարտեն վազքը: Տղամարդիկ, բնականաբար, ասպետորեն մի փոքր ետ մնացին: Բայց այս վազքարավում նույնիսկ վերջինը տեղ հասնողը պարտված չէր. հաղթեցին բոլորը: Վազքարավի հովանավոր «Շանս» հեռուստալոտոյի ղեկավարությունը բավականին թվով նվերներ, հուշանվերներ էր պատրաստել: Նվերներով պարգեւատրվեցին աղջիկներից ամենաավագը՝ Ռոզա Բաբայանը եւ ամենակրտսերը՝ Անահիտ Էլմաջյանը (նա ընդամենը 8 տարեկան է), ինչպես նաեւ վազքարավի ավագագույն մասնակիցը՝ 81-ամյա Վահե Դանիելյանը: Բոլորը «Շանսի» տոմսեր ստացան (հուսանք, որ շատերը շահել են):

Հենց նոր տրվել է վազքարավի մեկնարկը:

Վերջում խնդրեցինք կարծիք հայտնել սպորտի վետերանների միության նախագահ, մեր ճանաչված թեթեւատլետ Սվետլանա Եսայանին: «Սա տոնին նվիրված մեր անդրանիկ վազքարավն էր, ասաց նա: Լավ է, որ մեզ աջակցեց Երեւանի վազքասերների ակումբը՝ նախագահ Վլադիմիր Մակարյանի գլխավորությամբ: Իհարկե, լավ կլիներ, եթե մեկնարկի ելնեին նաեւ այլ մարզաձեւերի ներկայացուցիչներ. մենք շատերին էինք հրավիրել: Մտադիր ենք այս միջոցառումն ավանդական դարձնել, եւ հուսով եմ, որ հաջորդ վազքարավներն ավելի բազմամարդ կլինեն: Մեր նպատակը ավելի մեծ թվով աղջիկների ներգրավելն է: Վերջում ուզում եմ շնորհակալություն հայտնել մեր գլխավոր հովանավորին՝ «Շանս» հեռուստալոտո ՍՊԸ-ին»:

Հայուհիները լավ վարորդներ են

Այդ օրը մեկ այլ հետաքրքիր միջոցառում եւս անցկացվեց եւ նույնպես՝ առաջին անգամ:

Գեղեցիկ սեռի երկու տասնյակ ավտովարորդներ մայրաքաղաքի Հանրապետության հրապարակում մրցեցին՝ որոշելու համար ձեւավոր վարման ուժեղագույնին: Մրցումները, որ կազմակերպել էր ավտոմոբիլային սպորտի հանրապետական ֆեդերացիան, անցան շատ հետաքրքիր, հուզումնալից պայքարում: Վարորդները (ավելի ճիշտ՝ վարորդուհիները) հերթով պետք է հնարավորին չափ արագ եւ, որ շատ կարեւոր է, առանց խախտումների անցնեին բարդ մրցաստարածությունը: Ասենք, որ բոլորից արագ վերջնագծին հասավ Մարինե Շահինյանը, բայց տուգանային վայրկյանները նրան բավական ետ մղեցին:

Առավել հաջող անցավ մրցաստարածությունը Ծովինար Մելոյանը, որն էլ հաղթող ճանաչվեց ու արժանացավ գլխավոր մրցանակին: Ծովինարը ուսանողուհի է, սովորում է «Հայբուսակ» ինստիտուտի տնտեսագիտության ֆակուլտետի ավարտական կուրսում: Ինչպես ինքն ասաց, չէր սպասում, որ կհաղթի եւ շատ երջանիկ է: Երկրորդ եւ երրորդ մրցանակակիրներ դարձան համապատասխանաբար Լուսինե Աբրահամյանն ու Գայանե Եսայանը:

Միջոցառումը բազմաթիվ հովանավորներ ուներ, եւ բոլոր մասնակիցները պարգեւատրվեցին նվերներով, հուշանվերներով, ծաղկեփնջերով: Ամենահմայիչ մասնակցի մրցանակը ստացավ Էդիտա Մուրադյանը, իսկ անակնկալ մրցելույթի հեղինակինը՝ Սանդրին Օրմանսեյը: Վերջինիս ամուսինն աշխատում է Ֆրանսիայի դեսպանատանը, ինքն էլ ձեռքերը ծալած չի նստում: Եվ ահա, իմանալով ավտովարման մրցումների մասին, Սանդրինը որոշեց մասնակցել ու գրավեց չորրորդ տեղը: Ի՞նչ կարծիք եք մրցումների մասին հարցով դիմեցինք տիկին Օրմանսեյին: «Պարզապես հիացած եմ մրցումներով: Բայց նաեւ՝ մի քիչ տխուր եմ, ասաց ժպտադեմ ֆրանսուհին: Հույս ունեի հաղթել, բայց չստացվեց. հայ աղջիկներն ավելի ուժեղ գտնվեցին»:

Մրցումներից գոհ էր նաեւ ավտոսպորտի ֆեդերացիայի նախագահ Մկրտիչ Փիլոյանը: «Տեսանք, համոզվեցինք, որ մեր աղջիկներն ու կանայք կարող են հաջողությամբ մրցել այս դժվարին, բայց գրավիչ մրցաձեւում, ասաց նա: Այս մրցումներն անպայման ավանդական կդարձնենք»:

ԲԱԺԻՆԸ ՎԱՐՈՒՄ Է
ՈԱՀՄԻԿ ԱՎԱԳՅԱՆԸ

ԽԱՉԲԱՌ

Նախորդ համարում տպագրված խաչբառի պատասխանները

Ուղղահայաց

1. Լուսնաֆար: 2. Գարոն: 3. Շամպայն: 4. Վինկուր: 5. Դուրով: 6. Ֆելիետոն: 10. Ինկվիզիցիա: 11. Ֆոտսերիեր: 15. Կնամոլ: 16. Արագոն: 20. Արմենյան: 22. Անատոլիա: 23. Սունգարի: 24. Վերհառն: 28. Վարյա: 29. Անապա:

Հորիզոնական

7. Ֆուծիյամա: 8. Իմունիտետ: 9. Պոսպոմոգով: 12. Փանմ: 13. Գյավուր: 14. Վոլտա: 17. «Իրավունք»: 18. Դրասանգ: 19. Վալիդոլ: 21. Մորեալ: 25. Ամիր: 26. Բուրդել: 27. Դեկան: 30. Լանգերհանս: 31. Ժանգյոր: 32. Ռապսոդիա:



Հորիզոնական

3. Էսկիմոսի «ծնաբույր» բնակարան: 8. Դրա եռալու «արդյունքը» եռանդն է, սառչելունը՝ սարսափը: 9. Ունի եւ ակնոցը, եւ նկարը: 10. Ստալինը՝ կուսակցական ընկերների համար: 11. Գլխավոր զարկերակ: 12. Հիպոթոտամների աֆրիկյան գեսը: 16. Սարը, սարավորումը՝ թղթի վրա: 17. Աննա Կարենինային մարմնավորողը՝ ամերիկյան հեռուստակրանին: 20. Նիկոլաեւսկայա եւ Յուրեւսկայա եկեղեցիների «հասցեն»: 21. Նատրիումի բիկարբոնատը՝ որպես խոհարարական նյութ: 23. «Քառասունմեկերորդ»-ի ռեժիսորը: 25. Այդ երգչի մոտ 50/50-ը «հավասար է» 150-ի: 26. Կինոյում նա միստր Պիտկին է: 27. Մարված հոգիների հանգրվանը մահից հետո: 30. Ամեն մի շենքի բնակիչ ուզում է, որ այն բարեկարգ լինի: 32. Օրվա «ամենալուսավոր» մասը: 33. Առաջին գազանանոցի «տնօրենը»: 34. «Ճառասեղան»: 37. Նույն ինքը՝ 1796-1802 թթ. Պետերբուրգեցի: 38. Շոգեմեքենայի անգլիացի «կոնստրուկտորը»: 39. Նորապսակների ուսին գցվող թոնրածին: 40. Բուրատինոյի մինուճար ծնողը:

Ուղղահայաց

1. Սմբատն ու Միքայելը՝ Մարկոս աղայի համար: 2. Գերմանական Վերածննդի խոշորագույն նկարիչ: 3. «Փողի փոստատարի» անվանադիր բանկային գործառնություն: 4. Օթերայի շարադրանքը: 5. Քայլող «կակտուս»: 6. Ալադդինի «ափվող գործիքը»: 7. Նիհարին պակասում է, գերին խանգարում: 12. Մագմատիկ հեղուկ: 13. Վաճառողի «պարտքը»: 14. Հոմերոսի «արկածային» պոեմը: 15. Մեր օրերում Մամիկոնյանների այդ ամրոցը պաշտպանության նախարարության շենքը կհամարվեր: 18. Պղնձի եւ ցինկի համաձուլվածքն այլ մետաղների «մասնակցությամբ»: 19. Այդ տիկնիկը նույնիսկ «հղի է լինում»: 21. «Իր հովերով տարված» քամի: 22. Օթելոյի հիվանդագին խանդից տուժողը: 24. Հին հունական քերթության հայրը: 27. Շրջանառության մեջ դրված գումարի ցանկալի արդյունքը: 28. Սպասի ներկ, արծաթագույն մետաղ: 29. «Գովազդային» գազ: 31. Հին Հռոմում պետական բարձրագույն պաշտոններից, այժմ՝ հյուպատոս: 35. Հիվանդության բարձակետը: 36. Արեւելյան բաղնիքներում սպունգի «ֆունկցիան»:

ՄՐՑԱՇԳԱՅԻՆ

Թուրքիայում Լեհաստանի դեսպանն ինքնասպանություն է գործել

ԱՆԿԱՐԱ, 10 ԱՊՐԻԼ, ՍՆԱՐՔ: Թուրքիայում Լեհաստանի դեսպան Միրոսլավ Պալասզը ապրիլի 8-ի առավոտյան ինքնասպանություն է գործել՝ սեփական տան պատուհանից դուրս նետվելով: Մինչեւ ինքնասպանություն գործելը նա բուժվում էր Բայինդիր (Մարեցում) բժշկական կենտրոնում:

Նրա մահը ցնցել է Անկարայում հավատարմագրված դիվանագիտական կորպուսին, ինչպես նաեւ Թուրքիայի արտգործնախարարությանը: Ինչպես հաղորդում է Turkish Daily News-ը, ենթադրվում է, որ Լեհաստանի դեսպանի վրա ներգործել է իր կնոջ՝ Գալինա Պալասզի ինքնասպանության մասին Վարշավայից ստացված տխուր լուրը: Գալինա Պալասզը խաղկեղով հիվանդ էր եւ համապատասխան բուժում էր ստանում:

Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելը Լեհաստանի նախագահ Ալեքսանդր Կվասնեւսկուն հղած իր ուղերձում ցավակցություն է հայտնել՝ նշելով, թե Միրոսլավ Պալասզը հիանալի դիվանագետ էր, որը առավելագույն ջանքեր էր գործադրում Թուրքիայի եւ Լեհաստանի միջեւ երկկողմ հարաբերությունների զարգացման համար:

30 տարի առաջ Միրոսլավ Պալասզն իր կարիերան սկսել էր որպես Անկարայում Լեհաստանի դեսպանության մամլո քարտուղար: 80-ական թվականների սկզբներին նա նշանակվել էր Թուրքիայում Լեհաստանի դեսպանի պաշտոնում: Երկու տարի առաջ նա ստացել էր այդ պաշտոնում իր վերջին նշանակումը:

Չնայած ողբերգությանը, Լեհաստանի նախագահ Ալեքսանդր Կվասնեւսկու ապրիլի 14-17-ին նախատեսվող այցելությունը Թուրքիա չի հետաձգվում, հաղորդում է TDN-ը՝ վկայակոչելով դիվանագիտական աղբյուրները:

Իրաքցի խորհրդավոր բժիշկը բուժել է Ուսամա բեն Լադենին

ԼՈՆԴՈՆ, 10 ԱՊՐԻԼ, ՍՆԱՐՔ: Իրաքցի խորհրդավոր մի բժիշկ, փաստորեն, բուժել է N1 ահաբեկիչ Ուսամա բեն Լադենի ծանր հիվանդությունը, հաղորդում է «Սանդեյ թայմզ» թերթը:

Ինչպես ավելի վաղ հաղորդվել էր, սաուդյան միլիոնատեր-ահաբեկիչ Ուսամա բեն Լադենը, որը ներկայումս բնակվում է Աֆղանստանում, տառապում էր լյարդի ու երիկամների ծանր հիվանդությամբ: Սակայն վերջերս իրաքցի մի խորհրդավոր բժիշկ, Պակիստանի տարածից ներթափանցելով բեն Լադենի նստավայր, հեմոդիալիզի (արհեստական երիկամի) օգնությամբ բուժել է ահաբեկիչին, եւ հիվանդի առողջական վիճակը զգալիորեն բարելավվել է: Նույն աղբյուրի համաձայն, սարքը, որի միջոցով բուժել են բեն Լադենին, ժամանակին օգտագործել է նաեւ Աֆղանստանի նախկին նախագահ Նաջիբուլան, որին 1995 թվականին թալիբները մահապատժի ենթարկեցին:

Այնուամենայնիվ, Ուսամա բեն Լադենն իրեն ապահովված չի համարում եւ պարբերաբար դեպրեսիայի մեջ է ընկնում: Դիտորդների կարծիքով, ահաբեկիչը տագնապում է այն առնչությամբ, որ թալիբների կառավարությունը հանուն արտաքին աշխարհի հետ հարաբերությունների նվազագույն բարելավման, այնուամենայնիվ, իրեն կհանձնի ԱՄՆ-ին, որը բեն Լադենի գլխի համար 5 մլն դոլար պարգեւ է խոստացել:

Իրանն ազատեց 1000 իրաքցի գերիների

ԵՐԵՎԱՆ, 10 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ - ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ: Ապրիլի 9-ին Իրանն ազատ է արձակել 1980-1988 թթ.-ի Իրան-Իրաքյան պատերազմի ժամանակ գերված Իրաքցի 1000 գերիների: Իրանի եւ Իրաքի միջեւ հարաբերությունները բնականոն հունի մեջ դնելու ճանապարհին ամենամեծ խոչընդոտը շարունակում է մնալ գերիների փոխանակման հիմնախնդիրը:

Մայիսի 5-ին մոլորակների շերթ է սպասվում

ՄՈՍԿՎԱ, 8 ԱՊՐԻԼ, ՍՆԱՐՔ: Այս տարվա մայիսի 5-ին աստղագետները կանխատեսում են երկնային եզակի երեւույթ՝ մոլորակների շերթ: Ինչպես հաղորդել են Ռուսաստանի Աստղագիտության ինստիտուտում, այդ օրը տիեզերական յոթ մարմիններ կշարվեն անհարթ աղեղի տեսքով: Դրանցից երեքը՝ Մարսը, Յուպիտերը եւ Սատուրնը, արդեն այժմ երեւում են արեւմուտքում մայրամուտից անմիջապես հետո, սակայն միայն լավ եղանակին: Մայիսի 5-ին երկնակամարի գրեթե նույն շրջանում կհայտնվեն Մերկուրին, Վեներան, Լուսինը եւ Արեգակը: Մոլորակների շերթները կրկնվում են որոշակի պարբերականությամբ: Այսպես, 20-րդ դարում հայտնի շերթները տեղի են ունեցել 1962 եւ 1982 թվականներին:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Բժշկական ախտորոշման բնագավառում ճանաչված առաջատար

ԴԻԱԳՆՈՍՏԻԿԱ

բժշկական միավորումը հայտնում է, որ

ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՏՈՆԻ

կապակցությամբ հայտարարված

ԲԱՑ ԴՈՒՆԵՐԻ ՕՐԸ

կշարունակվի ապրիլի 10-12-ը: Այդ ընթացքում դիագնոստիկա դիմած բոլոր քաղաքացիները հանրապետության առաջատար բժիշկ-մասնագետների կոնսուլտացիաները կարող են ստանալ ԱՆՎՃԱՐ, իսկ ախտորոշիչ հետազոտություններն անցնել 50 տոկոս ԶԵՂՉՈՎ:

Հասցեն՝ Երեւան, Աջափնյակ, Մարգարյան փ. 6/1

☎ 35 11 01, 34 32 47

Հայաստանի ամերիկյան համալսարան

Հայաստանի ամերիկյան համալսարանը սկսում է 2000-2001 ուսումնական տարվա ընդունելությունը՝ **մագիստրոսի կոչում** շնորհող հետեւյալ ծրագրերով.

- **ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ**
- **ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**
- **ԳՈՐԾԱՐԱՐ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ**
- **ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**
- **ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ ՈՐՊԵՍ ՕՏԱՐ ԼԵԶՈՒ**

Բարձրագույն կրթությունը եւ անգլերենի լավ իմացությունը պարտադիր են:

Փաստաթղթերի ընդունման վերջին ժամկետն է **ապրիլի 17-ը, ժամը 15⁰⁰-ը**:

Տեղեկությունների համար դիմել՝

Երեւան, Մարշալ Բաղրամյան 40, 19 սենյակ:

ՀԵՌ.՝ 27-16-29

Հայաստանի ամերիկյան համալսարան

Հայաստանի ամերիկյան համալսարանի Արդյունաբերական ճարտարագիտության եւ համակարգերի կառավարման (ԱՃՀԿ) ֆակուլտետը շարունակում է 2000-2001 ուսումնական տարվա ընդունելությունը:

Ի լրումն արդյունաբերական կառավարման գիտելիքների, այս տարվանից ԱՃՀԿ-ն առաջարկում է դասընթացներ որպես երկրորդ մասնագիտություն (minor) ինֆորմացիոն տեխնոլոգիաների ոլորտում, ընդգրկելով հետեւյալ առարկաները.

C++ E-commerce Java

Wed design Data Base

Փաստաթղթերի ընդունման վերջին ժամկետն է ապրիլի 17-ը, ժ. 15⁰⁰

Տեղեկությունների համար դիմել՝ Մարշալ Բաղրամյան 40, 19 սենյակ: Հեռ. 27-16-29:

ԱՄՍ 1965 թ. գործող Հայաստանի ուսանողական ջոկատների հանրապետական շտաբը, որը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կամավորական ծառայության կոմիտեի անդամ է, հրավիրում է մասնակցելու Եվրոպայի երկրներում, ԱՄՆ-ում, Հայաստանում միջազգային աշխատանքի ճամբարների ամառային ծրագրերին որպես կամավորական:

Դիմումներն ընդունվում են հետեւյալ հասցեով՝ Կորյունի 19ա, 7-րդ հարկ

Հեռ. 52 27 01, 52 27 72, 52 27 88

Ի ԼՈՒՐ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ

Այսօր՝ 11:00, «Հոլսթեն» սրճարանում Մամուլի ազգային ակումբի «Հրատապ թեմա» ծրագրի հյուրասրահում տեղի կունենա հանդիպում արժեթղթերի շուկայի վարչության պետ **Տիգրան Կարապետյանի** հետ:

ՄՍՍ

ՀԵՌՈՒՏԱՏԵՍԱԳՐԵՐ

11 ապրիլ

9.00 Հայլուր
9.20 Սերիալ «Սուրճ՝ կնոջ բուրմունքով»
10.10 Իմ տունը
10.20 Մամուլի կրպակ
10.30 Բոհեմ
11.05 Գ/Ֆ «Ջանգում եմ, բացեք դուռը»
12.20 Կուլիսների ետեւում
12.40 Բարի ախորժակ
13.00 Հայլուր
13.20 Ռուբիկոն+
16.00 Մուլտֆիլմ «Բոցավառ սրտի լեգենդը»
16.20 «Սոդար լոտո»
17.00 Հայլուր
17.20 Սեզամ. բացվիր
18.00 Սերիալ «Սուրճ՝ կնոջ բուրմունքով»
19.00 1 լուր
19.10 «Հեռուստալոտո»
20.00 Ժողովրդական երգեր
20.10 Փաստագրական կինոնկար «Հայաստանի առաջին հանրապետությունը»
20.25 Արտակարգ ալիք
20.35 Տունտունիկ
21.00 Հայլուր
21.40 Պրեմիերա
21.55 Գ/Ֆ «Ազատության բանալիներ»
23.40 Հայլուր
00.00 Կեսգիշերային ճեղքնթաց
01.00 Ռուբիկոն+

Պրոմեթեւս
9.00 «Բարի լույս, Հայաստան»
10.00 «Ամեն ինչ հանուն քո սիրո»
17.00 Մուլտծրագիր
17.35 Բնաբխարհ. «Բնությանը պահապան»
18.10 Մանկական ժամ. սերիալ «Նինձյա կրտսերը», սերիալ «Սոլթին»
19.00 «Ամեն ինչ հանուն քո սիրո»
20.00 Լրաբեր
20.35 Մարզաբխարհն անցած շաբաթ
21.10 Համերգ. Գարի Մուր
21.40 «Պահի անատոմիա»
22.25 «1-02» լրատու
22.35 Գ/Ֆ «Սերն ու աղավնիները»

9.00 Տոմար
10.30 Անթեղ (կրկնություն)
11.00 Ավետա
19.05 Շղջիկ
19.30, 21.30, 24.00 Սուրհանդակ
20.00 Մամուլի խոսնակ
20.10 Հմայիլ
20.30 Ասպարեզ
21.10 Հրապարակ
22.05 Գ/Ֆ «Դեկորացիաների փոփոխություն»
0.35 Ակնթարթ
0.40 Գ/Ֆ «Սուր ցավ»
(ավարտին՝ Սուրհանդակ)

7.00 Բարի առավոտ
10.00 Նորություններ
10.15 Սերիալ «Քնքուշ թույն»
16.00 Նորություններ
16.20 Մուլտսերիալ «Ջոնի Քվեսթի անհավանական արկածները»
16.45 Ամեն ինչ հնարավոր է
17.00 Պատանի գլադիատորները «Լեռան արքան» ծրագրում
17.25 ...Մինչեւ 16 եւ բարձր
18.00 Սերիալ «Քնքուշ թույն»
19.00 Նորություններ
19.30 KBH-մոլորակ
20.00 Փնտրում եմ ինձ
20.45 Սերիալ «Հուսեր Շերլոտ Հոլմսի մասին»
21.45 Բարի գիշեր, երեխաներ
22.00 ժամանակ
23.00 Գ/Ֆ «Գարունը Ջարեչնայա փոստում» (դերերում՝ Ն. Իվանովա, Ն. Ռիբնիկով, Վ. Գուլյաեւ, 1956 թ.)
00.45 Նշանավոր մարդկանց կյանքը. Էռնեստ Նեիզվեստնի
01.45 Նորություններ
02.00 Պատմական սերիալ «Նոր դարաշրջան» (դերերում՝ Է. Էնդրյուս, Ա. Գարդներ, ԱՄՆ, 1985 թ.)

7.00, 8.00, 9.00, 10.00 Լուրեր
7.20-10.30 Բարի լույս, Ռուսաստան
7.35, 9.35 Ընտանեկան նորություններ
9.20 Հեռուստատեսային ՀՄՄ. հերթապահ բաժանմունք
10.35 Քվանտային բժշկագիտություն
10.40 «Արենա սպորտ»
11.10 Հոմեոպատիա եւ առողջություն
11.20 Սերիալ «Գնչուհին»
12.05 Սերիալ «Սանտա Բարբարա»
13.00 Հեռուստատեսային ՀՄՄ
13.25 Մոսկվա-Մինսկ
14.00, 18.00, 21.00, 00.00 Լուրեր
14.30 «Կանանց խաղաք»
15.05 Սերիալ «Սեւ մարգարիտ»
15.50 Սերիալ «Հարուստներն ու նշանավորները»
16.45 Երկխոսություններ կենդանիների մասին
17.35 Մուլտսերիալ «Արկածներ ուռենիների տակ»
18.30 Ազատակ
18.55 Մանուշակագույն մուշ
19.25 «Կ-2»-ը ներկայացնում է
20.25 Լիակատար մոդեռն
21.45 Սերիալ «Վայրի հրեշակը»
22.45 Կինոյի ժամ. Դանիել Բերնհարդը «Մենակ Յակուծայի դեմ» ֆիլմում (ԱՄՆ)
01.05 Թեժ տասնյակ
02.00 Հեռուստատեսային ՀՄՄ. հերթապահ բաժանմունք
02.15 Խանութ բազմոցի վրա

@rmineo Global Telecommunications

Համակարգչային ուսուցում՝ ԻՆՏԵՐՆԵՏ դպրոցում: Խանջյան 50: Հեռ. 575823:

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արշակունեաց 2 Գրանցման թիւ 65. Դասիչ 69150. Պատուէր 1239 Տպաքանակը՝ 4000 Ստորագրված է տպագրության՝ 10. 04. 2000 Գինը՝ 100 դրամ